ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ՝ ԹԱՓԱՆՑԻԿ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ

«ԳՈՐԻՍԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ» ՀԿ

ԳՈՐԻՍ 2022

Ուսումնասիրությունն իրականացվել է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Մասնակցային ժողովրդավարությունը գործողության մեջ» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է նպաստել պետական կառավարման և ժողովրդավարական գործընթացներում ապացույցների վրա հիմնված և մասնակցային որոշումների կայացմանը: Ծրագիրն իրականացվում է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի և իր գործընկերների՝ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» և «Քաղաքական երկխոսություն» ՀԿ-ների կողմից

Սույն զեկույցը հրապարակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է «Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ-ն և այն չի արտացոլում Եվրոպական միության տեսակետները

Բովանդակություն

Օգտագործված հապավումների ցանկ 3
Ամփոփագիր 4
Ներածություն 6
Հետազոտության մեթոդաբանություն 8
Կիրառելի մեթոդաբանությունը 9
Իրավիճակի նկարագրություն՝ ըստ համայնքների 15
Հարցազրույցներ թիրախ խմբերի հետ 34
Եզրակացություն 42
Առաջարկություններ 47

Օգտագործված հապավումների ցանկ

ԱՄՆ- Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ՀՀ- Հայաստանի Հանրապետություն
ՀՈԱԿ- Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՏԱՊ- Տարեկան աշխատանքային պլան
ՏԿԵ- Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏԻՄ- Տեղական ինքնակառավարման մարմին
ՆՈՒՀ- Նախադպրոցական ուսումնական հաստատություն

Ամփոփագիր

«Զարգացման ծրագրերը՝ թափանցիկ, հրապարակային» ծրագրով ուսումնասիրվել է ՀՀ Կառավարության կողմից Սյունիքի մարզի Մեղրի, Կապան, Սիսիան, Գորիս, Տեղ, Տաթև համայնքներին 2019-22թթ պետության կողմից տրված սուբվենցիոն ծրագրերի ընտրության, ներկայացման, ֆինանսավորման ընթացքը, իրականացված ծրագրերի արդյունավետությունը, դրանց ընտրության, իրականացման գործում քաղաքացիների մասնակցությունը:

Ուսումնասիրվել է, թե «Հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման» կարգերը որքանով են արդյունավետ:

Հետազոտությունն իրականացվել է փաստաթղթային մեթոդով, գրավոր հարցումներով, նաև համայնքներում հարցումներ են իրականացվել տեղական իշխանության ներկայացուցիչների և բնակիչների շրջանում:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ գրեթե բոլոր համայնքներում (բացառություն՝ Կապանը) ծրագրերն իրականացվում են համայնքային կենտրոնում կամ համայնքային կենտրոնի մերձակա բնակավայրերում:

Փաստաթղթային ուսումնասիրությունը պարզել է, որ սուբվենցիոն ծրագրերը կազմելուց առաջ բնակավայրերում հիմնականում հանրային լսումներ չեն իրականացվում, և ծրագրերն ընտրվում են իշխանությունների նախասիրությամբ: Որոշ համայնքների առանձին բնակավայրերում մի քանի ծրագիր է հաստատվում:

Համայնքային իշխանությունների ներկայացուցիչների մեծ մասի կարծիքով հանրային լսումների կազմակերպումը ժամանակատար է, որոշ առումով աննպատակահարմար, քանի որ մասնակիցներից յուրաքանչյուրն ակնկալում է իրեն վերաբերող խնդրի լուծում: Ըստ ՏԻՄ ներկայացուցիչների, իրենք քաջատեղյակ են համայնքում առկա խնդիրներին:

Մյուս կողմից, բնակիչների շրջանում անցկացված հարցումները պարզել են, որ նրանցից շատերը տեղյակ չեն, թե զարգացման ինչ ծրագրեր են իրականացվում իրենց համայնքներում: Հարցվողներից ոմանց անգամ հետաքրքրված չեն, թե համայնքային իշխանություններն ինչ որոշումներ են կայացնում իրենց կյանքի որակը փոխելու համար և ցանկություն չունեն մասնակցելու հանրային լսումներին: Բնակիչներից ոմանք, առաջարկում են հանրային լսումների փոխարեն պարբերաբար հանդիպումներ կազմակերպել, լսել նաև իրենց ձայնը:

Համայնքապետարանները սուբվենցիոն հայտերի վերաբերյալ տեղեկատվությունը տարածում են պաշտոնական կայքերում, սակայն ոչ միշտ և ոչ մատչելի բնակիչների համար: Հաճախ լսումներին ներկայացվում են արդեն իսկ ընտրված ծրագրերը, և հանրային լսումը կարող է տևել ընդամենը կես ժամ: Մեկ այլ դեպքում այն համայնքներում, որտեղ հանրային քննարկումներ են կազմակերպվում, հիմնականում օրակարգում միաժամանակ մի քանի հարց է դրվում, որն անարդյունավետ է:

Համայնքների մեծ մասը չի օգտագործում տեղեկատվության տարածման այլընտրանքային գործիքներ, ինչպես օրինակ, ֆեյսբուքը: Բնակիչների համար հետադարձ կապի ապահովման մեխանիզմն ակտիվ չէ:

Հանրային լսումների առցանց կազմակերպումը, չնայած դրական կողմեր ունի խոշորացված համայնքի պարագայում, այնուամենայնիվ բնակչության ոչ բոլոր խավերն են կարողանում մասնակցել՝ կապված օնլայն ռեսուրսների անհիրազեկության հետ:

Հետազոտությունը նաև պարզել է, որ հանրային լսումների անցկացման թղթավարությունը պատշաճ չի կատարվում:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչներն, առանց խտրականության, տեղեկացվում են ՏԻՄ-երի գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա: Հետևաբար, հանրային լսումների կազմակերպումը, ինչպիսի մեխանիզմներով էլ որ իրականացվի, օրենսդրական պահանջ է, կիրարկման համար պարտադիր, և բնակավայրերում հանրային լսումներ չկազմակերպելով, խախտվում են այն օրենսդրական պարտադիր պահանջները, որոնք ամրագրված են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի ընդունած «Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրության» մեջ:
Հետազոտության եզրակացությունների արդյունքում, ինչպես նաև զեկույցի նախնական քննարկումների ընթացքում կատարվել են մի շարք առաջարկություններ, որոնք կարող են խթանել ՏԻՄ-երի հրապարակայնությունը, թափանցիկությունը, բնակիչների մասնակցայնությունը տեղական ինքնակառավարմանը: Դրանք հիմնականում վերաբերում են հանրային լսումների կազմակերպման նոր գործիքակազմի մշակմանը՝ հաշվի առնելով բազմաբնակավայր համայնքների առանձնահատկությունները, ՏԻՄ-երի և բնակիչների միջև հաղորդակցության ապահովման նպատակով ավագանու ինստիտուտի կայացմանն ուղղված նախաձեռնություններին, սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար համայնքի ներդրման համար սահմանված ոլորտային միավորների փոփոխությանը, սուբվենցիոն ծրագրերի ընտրության, հաստատման գործընթացում որոշ կառույցների, օրինակ, մարզպետարանների անհարկի միջամտությանը:
Համայնքի ներդրման անհնարինության պատճառով սուբվենցիոն ծրագրեր չեն ներկայացվում փոքր բյուջե ունեցող համայնքները, և պետությունը պետք է այլընտրանքային մոտեցում ցուցաբերի:
Հանրային լսումների ժամանակացույցերի առումով առաջարկվում է սուբվենցիոն ծրագրերի ընտրություն կատարել բացառապես հնգամյա զարգացման ծրագրերում ընդգրկված խնդիրներից, և լսումները կազմակերպել այդ ծրագրի համար:

Ներածություն

ՀՀ Կառավարությունը համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման, կապիտալ խնդիրների լուծման համար յուրաքանչյուր տարի, ըստ համայնքներից ստացվող հայտերի, ֆինանսավորում է մի քանի տասնյակ ծրագիր: Հայտերի մշակման, քննարկման և հաստատման կարգ է սահմանվել, ըստ որի թիրախ համայնքների բնակիչները պետք է մասնակցեն ֆինանսավորման ներկայացվող խնդիրների առաջնահերթությունների որոշմանը, ծրագրային առաջարկների գնահատմանը, սակայն **տեղական իշխանությունները երբևէ չեն կիրառում այս ընթացակարգը: Ֆինանսավորման են ներկայացվում այնպիսի խնդիրներ, որոնք միանձնյա են ընտրվում, առանց հանրային քննարկումների, իսկ հանրային քննարկումներ կազմակերպելու դեպքում էլ այն ձևական բնույթ է կրում, քանի որ հիմնականում մասնակցում են համայնքային ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների, հիմնարկների աշխատակիցները, և որոշումը ընդունվում է միանձնյա:**

Համայնքապետարաններն ունեն հանրային քննարկում բաժին, որտեղ համայնքապետարանը պետք է ներկայացնի քննարկման թեման, իսկ բնակիչներն իրենց կարծիքներն արտահայտեն, բայց այդ բաժինը միշտ դատարկ է: Մի կողմից համայնքապետարանի աշխատակիցները չեն լրացնում այդ բաժինը, որպեսզի քննարկում ծավալվի, մյուս կողմից՝ բնակիչները չգիտեն այդ գործիքի մասին, որովհետև համայնքապետարանը երբևէ հանրությանը տեղյակ չի պահում, որ նման գործիք կա:

Ծրագրերը Սյունիքի մարզպետարանի միջոցով են ներկայացվում են ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Վերջինս համապատասխան ուսումնասիրություններից և թերի փաթեթները լրամշակելուց հետո դրանք ներկայացնում է վարչապետի որոշմամբ ստեղծված սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովին: **Անհասկանալի է, թե արդյոք մարզպետարաններն օբյեկտիվ և անաչառ են ծրագրերի ընտրության հարցում: Արդյո՞ք թափանցիկ են գործում այդ հանձնաժողովները, որքա՞նով են հրապարակային:**

Ծրագրով ուսումնասիրվել է ՀՀ Կառավարության կողմից Սյունիքի մարզի Մեղրի, Կապան, Սիսիան, Գորիս, Տեղ, Տաթև համայնքներին 2019-22թթ պետության կողմից տրված սուբվենցիոն ծրագրերի ընտրության, ներկայացման, ֆինանսավորման ընթացքը, իրականացված ծրագրերի արդյունավետությունը, դրանց ընտրության, իրականացման գործում քաղաքացիների մասնակցությունը

Ուսումնասիրվել է, թե «Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության» և «Հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման» կարգերը որքանով են կիրառելի: Մշակվել են առաջարկություններ, որոնց կիրառման միջոցով բնակչությունն առավել ակտիվ կներգրավվի սուբվենցիոն ծրագրերի առաջնահերթությունների ընտրության գործընթացին, ինչպես նաև այդ առաջարկությունները կնպաստեն իշխանությունների գործունեության թափանցիկության ապահովմանը, կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը, հանրային միջոցների արդյունավետ ծախսմանը:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրել Սյունիքի մարզի Մեղրի, Կապան, Քաջարան, Սիսիան, Գորիս, Գորայք, Տաթև և Տեղ համայնքներում 2019-22թթ.-ին սուբվենցիոն ծրագրերի ընտրության գործում բնակչության մասնակցությունը:

Հետազոտության խնդիրն է՝ պարզել, թե

1) Սյունիքի մարզի համայնքներում ինչպես է ապահովվում սուբվենցիոն ծրագրերի թափանցիկությունն ու հրապարակայնությունը:
2) Սուբվենցիոն ծրագրերի ընտրության առաջնահերթությունների որոշման հարցում որքանո՞վ է հաշվի առնվել բնակչության կարծիքը:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության համար ընտրվել են հետևյալ մեթոդները՝

1) Փաստաթղթային ուսումնասիրություն

- Համայնքների պաշտոնական կայքերի ուսումնասիրություն
- գրություններ համայնքապետերին
- գրություններ՝ Սյունիքի մարզպետին, ՏԿԵ նախարարին

Փաստաթղթային մեթոդով ուսումնասիրվել է՝

- 2019-22թթ. տարվա ընթացքում թիրախ համայնքներում իրականացված սուբվենցիոն ծրագրերի ցանկը և ավագանու որոշումների առկայությունը:
- Համայնքների տարբեր բնակավայրերում կազմակերպված հանրային լսումների արձանագրությունները՝ պարզելու համար հանրային քննարկումները բացահայտե՞լ են համայնքների կարիքները և դրանց առաջնահերթությունը: Համայնքի բոլո՞ր բնակավայրերում են կազմակերպվում հանրային լսումներ, բնակավայրերում մարդիկ իրազեկվա՞ծ են իրականացվող սուբվենցիոն ծրագրերի մասին:
- Ինչպե՞ս են անցկացվում հանրային լսումները, ինչպե՞ս են համայնքի տարբեր բնակավայրերի բնակիչներին իրազեկում լսումների, քննարկումների անցկացման մասին, մարդիկ ինչպե՞ս են արձագանքում և ի՞նչ խնդիրներ կան մասնակցայնությունն ապահովելու առումով:
- Տեղական ինքնակառավարման մարմինները որքանո՞վ են կիրառում ավագանու կողմից «Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության», «Հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման» կարգերը:
- Բացի հանրային լսումներից, ի՞նչ այլ գործիքներով են համայնքի բնակչությանն իրազեկում զարգացման ծրագրերի մասին:

2) Հարցազրույցներ թիրախ խմբերի հետ

- հարցազրույցներ բնակիչների հետ
- տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ

Հարցազրույցներ են իրականացվել թիրախ ՏԻՄ (Կապան, Քաջարան, Սիսիան, Գորիս, Տեղ, Տաթև)-երի ներկայացուցիչների հետ՝ պարզելու ծրագրերը ֆինանսավորման ներկայացնելու գործընթացը՝ ինչպես են մշակվել և ինչո՞ւ են դրանք կարևորվել: Ինչպե՞ս է որոշվել ծրագրերի առաջնահերթությունը, արդյո՞ք բնակիչների կարծիքը հաշվի է առնվել: Հարցազրույցից հրաժարվել են միայն Մեղրիի ՏԻՄ-ի ներկայացուցիչները:

Բնակիչների հետ հարցազրույցներն իրականացվել են պատահականության սկզբունքով՝ սեպտեմբերին, հետևյալ հարցերի շրջանակում՝

- Համայնքապետարանում երբևէ քննարկումների մասնակցե՞լ եք, ինչի՞ մասին են եղել քննարկումները
- Ինչպե՞ս եք տեղեկացել քննարկման մասին
- Հետաքրքրե՞լ են ձեզ քննարկվող հարցերը, համաձայն էիք առաջարկվող ծրագրերին, եթե՝ ոչ, որևէ առաջարկ ներկայացրե՞լ եք
- Համայնքապետարանն ինչպե՞ս է վերաբերվել Ձեր առաջարկին, քննարկե՞լ են այն
- Տեղյա՞կ եք, թե ինչ սուբվենցիոն ծրագրեր են իրականացվում ձեր համայնքում
- Ձեր կարծիքով դրանք ամենաառաջնահե՞րթն են համայնքի համար, թե՞ այլ առաջարկ ունեք:

Կիրառելի մեթոդաբանությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշում, N 2 հավելված, կետ 12:

ՀՀ կառավարությունը պետական բյուջեից համայնքներին սուբվենցիա տրամադրելու նպատակով ընդունել է 2019թ. մարտի 19-ի 278-Ա «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» որոշումը:

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ և 16-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված կարգի դրույթները՝

1) **Ստեղծել** Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

2) **Հաստատել՝**

- հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.
- հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3) **Հանձնաժողովի գործունեության նպատակը.** ՀՀ պետական տարեկան բյուջեով նախատեսված սուբվենցիաներից բացի, համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման նպատակով ծրագրային հայտերի քննարկումն ու գնահատումն է:

Կառավարությունը 2019 թ.-ի հունվարի 31-ի N 62-Ն որոշումով փոփոխություններ է կատարել որոշման մեջ, մասնավորապես՝ սուբվենցիայի հայտերն ընդունելու կարգի մեջ.

4) Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաներ ստանալու նպատակով համայնքների ղեկավարները (բացառությամբ Երևանի քաղաքապետի) սուբվենցիայի հայտը նախատեսվող օբյեկտի և շինարարական աշխատանքների կատարման կամ ձեռքբերվող մեքենասարքավորումների տեխնիկական բնութագրերի (այսուհետ՝ բնութագիր) հետ միասին ներկայացնում են համապատասխան մարզպետարան՝ մինչև ընթացիկ տարվա մարտի 10-ը:

5) Մարզպետարանը, ստանալով սուբվենցիայի հայտը և բնութագիրը, ուսումնասիրում է այն և մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մասով հայտի վերաբերյալ առարկություններ չունենալու դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն (այսուհետ՝ նախարարություն): Առարկություններ ունենալու դեպքում վերադարձնում է հայտը և բնութագիրը համապատասխան համայնքի ղեկավարին՝ լրամշակման: Համայնքի ղեկավարի կողմից երեք աշխատանքային օրվա ընթացքում լրամշակված հայտն ու բնութագիրը չներկայացնելու դեպքում հայտը համարվում է վերադարձված:

6) Նախարարությունը, ստանալով սուբվենցիայի հայտը և բնութագիրը, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է դրանք ոլորտային պետական կառավարման մարմինների քննարկմանը:

7) Ոլորտային պետական կառավարման մարմինները, ստանալով ծրագրային հայտը և բնութագիրը, երեք աշխատանքային օրվա ընթացքում նախարարություն են ներկայացնում դրանց վերաբերյալ դիրքորոշումը և դիտողությունները:

8) Նախարարությունը հայտերի և բնութագրերի վերաբերյալ կարծիքներն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում դրանք ներկայացնում է համապատասխան մարզպետարաններ:
9) Մարզպետարանները մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում են համապատասխան համայնքներին:
10) Համայնքները ստացված դիրքորոշումների և դիտողությունների հիման վրա առավելագույնը 30 աշխատանքային օրվա ընթացքում կազմում են սույն կարգի 12-րդ կետի դրույթների համաձայն սուբվենցիայի ամբողջական փաթեթները և ներկայացնում են համապատասխան մարզպետարաններ:
11) Մարզպետարանները սուբվենցիայի փաթեթը ստանալուց հետո, ստուգելով դրանց համապատասխանությունը սույն կարգի դրույթներին և հայտերով ներկայացվող ծրագրերի իրականացման իրագործելիության և ֆինանսական ցուցանիշների համապատասխանության մասով առարկություններ չունենալու դեպքում, երեք աշխատանքային օրվա ընթացքում կից գրությամբ փաթեթը ներկայացնում են նախարարություն՝ մինչև ընթացիկ տարվա մայիսի 15-ը:

12) Սուբվենցիայի ամբողջական փաթեթը ներառում է՝
- սուբվենցիայի հայտը.
- ծրագրի իրականացման նպատակահարմարության վերաբերյալ՝
  - Հայաստանի Հանրապետության համապատասխան համայնքի ավագանու որոշումը,
  - Հայաստանի Հանրապետության համապատասխան համայնքի ղեկավարի գրությունը,
  - Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի ուղեկցող գրությունը.

13) ծրագիրն իրականացնելու նպատակով կազմակերպված հանրային լսումների արձանագրությունը.
14) շինարարական ծրագրերի դեպքում նախագծանախահաշվային փաստաթղթերը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված դրանց վերաբերյալ փորձաքննական դրական եզրակացությունները և (կամ) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան կազմակերպված մրցակցային ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերը.
15) Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների հայտերը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում նախնական քննարկվում են նախարարությունում՝ հայտերի՝ սույն կարգի դրույթներին համապատասխանության մասով:
16) Սույն կարգի դրույթներին չհամապատասխանող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման N 3 հավելվածով սահմանված ծրագրային հայտի ձևաչափին անհամապատասխան և պահանջվող թերի փաստաթղթերով սուբվենցիայի հայտերը վերադարձվում են համայնքների ղեկավարներին՝ լրամշակման՝ ժամկետ սահմանելով 10 աշխատանքային օր, բայց ոչ ուշ, քան սույն կարգով սահմանված սուբվենցիայի հայտերի փաթեթների ընդունման վերջնաժամկետը:
17) Նախարարությունը, ամփոփելով ծրագրային հայտերը և կից փաստաթղթերը, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծված սուբվենցիայի ծրագրերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) անդամներին, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, այլ շահագրգիռ մարմինների քննարկմանը:

18) Հանձնաժողովի անդամները, հայտերը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ելնելով համայնքի զարգացման և (կամ) հրատապ հարցերի հիմնալուծման վրա ազդեցությունից՝ տալիս են ծրագրային հայտերի վերաբերյալ եզրակացությունները, այդ թվում՝ դրական կամ բացասական դիրքորոշումները և ներկայացնում նախարարություն:
19) Նախարարությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում ամփոփելով հանձնաժողովի անդամների, ինչպես նաև այլ շահագրգիռ մարմինների կողմից հայտերի վերաբերյալ ներկայացված կարծիքները և արդյունքները, ներկայացնում է հանձնաժողովի նիստի քննարկմանը:
20) Հանձնաժողովը նիստի ընթացքում տալիս է հայտի վերաբերյալ դրական, բացասական կամ լրամշակման վերադարձնելու մասին եզրակացություն՝ ելնելով՝

- տարածքների համաչափ զարգացման միտումներից.
- համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման վրա էական ազդեցությունից.
- համայնք-մասնավոր համագործակցության առկայությունից:

21) Հանձնաժողովի նիստի ընթացքում յուրաքանչյուր սուբվենցիայի հայտի վերաբերյալ դրական, բացասական կամ լրամշակման վերադարձնելու մասին եզրակացությունը տրվում է հանձնաժողովի անդամների բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:
22) Լրամշակման վերադարձվող յուրաքանչյուր հայտի լրամշակման ժամկետը սահմանում է հանձնաժողովը, բայց ոչ ավելի, քան 20 աշխատանքային օրը:
23) Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետում լրամշակված սուբվենցիայի հայտերը քննարկվում են հանձնաժողովի նիստում՝ հայտերում կատարված փոփոխությունների ներկայացմամբ՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից:
24) Հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում նախարարությունը դրա մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է համապատասխան հայտ ներկայացնող համայնքի ղեկավարին՝ նշելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքին սուբվենցիայի տրամադրման տոկոսը և վերջինիս առաջարկում է կազմակերպել գնման մրցակցային գործընթաց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, և մրցույթի արդյունքներով հաստատված հայտի բյուջեն ներկայացնել նախարարություն:
25) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում առաջարկություն՝ ծրագիրը ֆինանսավորելու համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համապատասխան համայնքին սուբվենցիայի տեսքով միջոցներ հատկացնելու վերաբերյալ:

Տեղական ինքնակառավարման օրենսդրական կարգավորումներ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 13-րդ, 14-րդ կետեր, 11-րդ հոդվածի 9-12-րդ կետեր, 4-6-րդ կետերը, 16-րդ հոդվածի 38-րդ կետը, 35-րդ հոդվածի 13-րդ կետին, 37-րդ հոդվածը,

19.10.1985թ ընդունված Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի դրույթները, որը ՀՀ համար ուժի մեջ է մտել 01.05.2002թ-ին,

16.11.2009թ.-ին **Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (ՏԻԵԽ) կողմից ընդունված «Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը**», որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2013թ.սեպտեմբերի 1-ին:

Համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու իրավունքը անվերապահորեն երաշխավորված է համայնքի յուրաքանչյուր բնակչի համար:

Համաձայն 19.10.1985թ. ընդունված Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի, որը ՀՀ համար ուժի մեջ է մտել 01.05.2002թ.-ին, ըստ նախաբանի՝ տեղական ինքնակառավարման մարմինները ցանկացած ժողովրդավարական ռեժիմի հիմնական հիմքերից մեկն են, համարելով, որ պետական գործերի կառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքը Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների ժողովրդավարական սկզբունքներից է:

16.11.2009թ.-ին Ուտրեխտում **Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա (ՏԻԵԽ) կողմից ընդունվել է «Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը»**, որը Հայաստանի կողմից ստորագրվել է 2010թ.մարտի 18-ին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2013թ.սեպտեմբերի 1-ին:

Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ 1. Մասնակից պետությունները, իրենց իրավազորության շրջանակներում, **ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինների գործերին յուրաքանչյուրի մասնակցության իրավունքը:** 2. Տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցության իրավունք նշանակում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և պարտականությունների իրականացումը որոշելու կամ դրանց վրա ազդելու ձգտման իրավունքը: 3. Այդ իրավունքի իրականացմանը նպաստելու միջոցները սահմանվում են օրենքով: 4. Յուրաքանչյուր Կողմ օրենքով ճանաչում է իր քաղաքացիների իրավունքը՝ մասնակցելու, որպես քվեարկողներ կամ թեկնածուներ, այն տեղական ինքնակառավարման մարմինների խորհրդի կամ ժողովի անդամների ընտրությանը, որտեղ նրանք բնակվում են:

Արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը ձեռնարկում են բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքը կյանքի կոչելու համար: 2. Մասնակցության իրավունքի իրականացման միջոցները ներառում են՝

լիազորել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ հնարավորություն ընձեռել, խրախուսել և նպաստել սույն Արձանագրության մեջ ամրագրված մասնակցության իրավունքի իրականացմանը

ապահովել՝

մարդկանց ներգրավման ընթացակարգերի սահմանումը, որոնք կարող են ներառել խորհրդատվական գործընթացներ, տեղական հանրաքվեներ և խնդրագրեր, իսկ եթե տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության ներքո գտնվող տարածքում բնակչության թիվը մեծ է և (կամ) այն ընդգրկում է աշխարհագրական մեծ տարածք՝ մարդկանց այնպիսի մակարդակով ներգրավելուն ուղղված միջոցներ, որոնք ավելի մոտ են նրանց,

Կողմի սահմանադրական կարգին և միջազգային իրավական պարտավորություններին համապատասխան՝ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական փաստաթղթերին հասանելիության ընթացակարգերի սահմանումը,

այնպիսի միջոցների սահմանումը, որոնք ուղղված են մասնակցության որոշակի դժվարությունների հանդիպող մարդկանց կատեգորիաների կարիքների բավարարմանը,

մեխանիզմների և ընթացակարգերի սահմանումը՝ քննարկելու և արձագանքելու տեղական ինքնակառավարման մարմինների ու տեղական հանրային ծառայությունների վերաբերյալ ստացված բողոքներին և առաջարկներին,

խրախուսել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը՝ սույն Արձանագրությամբ ամրագրված մասնակցության իրավունքին աջակցման և իրականացման համար:
Արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն՝ Արձանագրությունը կիրառվում է Կողմի տարածքում գործող տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր կատեգորիաների նկատմամբ:
ՀՀ Սահմանադրության 183-րդ հոդվածի համաձայն՝ 1. Համայնքի բնակիչները կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով: 2. Տեղական հանրաքվեի անցկացման կարգը, ինչպես նաև համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու այլ եղանակները սահմանվում են օրենքով:
«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝
Տեղական ինքնակառավարման սկզբունքներն են՝
1) տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվողականությունը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը.
2) տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը:
«**Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն,** սույն օրենքի իմաստով՝ համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:
- Համայնքում տեղական ինքնակառավարմանը օրենքով սահմանված կարգով մասնակցելու իրավունք ունի տվյալ համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:
- Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունների շրջանակներում, նրանց գործունեության բնագավառներում:
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչները կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով:
Համայնքը, անկախ բնակչության քանակից, պետք է ունենա պաշտոնական համացանցային կայք, որի ստեղծումն ու վարումն ապահովում է համայնքի ղեկավարը՝ սույն օրենքով և համայնքի ավագանու սահմանած կարգով: Համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ առնվազն պետք է առկա լինեն՝
համայնքում բնակիչների հետ հանդիպումների, հանրային լսումների և քննարկումների նյութերը, ընթացակարգը, անցկացման վայրը և ժամը.
համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, ինչպես նաև սույն մասի 9-րդ կետով նախատեսված այլ փաստաթղթերի վերաբերյալ անցկացված հանրային լսումների և քննարկումների արդյունքները.
համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության,

համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման և այլ կարգեր.

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝

38) քննարկում և որոշում է կայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝

առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքում հետևյալ կարգերը հաստատելու վերաբերյալ.

1) ***Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության կարգ***

2) ***Համայնքի ղեկավարին կից խորհրդատվական մարմինների ձևավորման և գործունեության կարգ***

3) ***Հանրային լսումների և (կամ) քննարկումների կարգ:***

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝

Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում իրականացնում է հետևյալ **<u>սեփական լիազորությունները.</u>**

համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց (այդ թվում՝ տեղեկատվության և հեռահաղորդակցության).

ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար. ..

Իրավիճակի նկարագրություն՝ ըստ համայնքների

Կապան համայնքի սուբվենցիոն հայտերի ընդունման և հաստատման ընթացակարգի ուսումնասիրություն՝ ըստ տարիների

2019թ.-ին Կապան համայնքը երկու ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 8 մայիսի 2019թ. N 52-Ա որոշումով[1] Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի հարթ և լանջավոր տանիքների նորոգում

Հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպման համար ավտոբուսների ձեռքբերում:

Կառավարության՝ 2019թ. մարտի 19-ի 278-Ա «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» որոշումով ընդունված կարգի համաձայն՝ այն ներկայացվել է Սյունիքի մարզպետարան, որն էլ փոխանցել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Կապան համայնքի ներկայացրած երկրորդ ծրագրային հայտի վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանին բացասական կարծիք է ներկայացրել Էկոնոմիկայի նախարարը: Ստորև առարկության հիմնավորումը.

«Կապան համայնքի «Հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպման համար ավտոբուսների ձեռքբերում» ծրագրային հայտի առնչությամբ հայտնում ենք, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիրքորոշումը բացասական է՝ ելնելով ներքոհիշյալ հիմնավորումից:

Համայնքը նախատեսում է ձեռք բերել 3 ավտոբուս համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքների կազմակերպման համար, որոնք սպասարկելու են 50 դրամով: Ներկա դրությամբ համայնքն ամսական 3-3.5 մլն դրամ է հատկացնում վերոնշյալ ծառայությունը մատուցող մասնավոր կազմակերպությանը՝ 3 երթուղային գծի սպասարկման համար:

Գնահատումները ցույց են տալիս, որ համայնքի կողմից ՓԲԸ-ի հիմման միջոցով ներհամայնքային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման ամսական ծախսը այլ հավասար պայմաններում գրեթե հավասար է ներկայումս սուբսիդավորման ծավալին:

Համայնքից աշխատանքային կարգով ստացված տեղեկատվության համաձայն ներկայումս գործող 1-ին երթուղին սպասարկում է օրական մոտ 190 մարդ, 2-րդ երթուղին օրական մոտ 700 մարդ: Ըստ մոտավոր գնահատականների, երթուղիների վարձավճարի իրական արժեքը կազմում է 70-80 դրամ: Համայնքի կողմից 50 դրամով սպասարկման ծառայություն կազմակերպելու դեպքում ամսական կպահանջվի լրացուցիչ մոտ 500-600 հազար դրամ (միայն ուղեվարձի 20 դրամ տարբերությունը հաշվի առնելով): Հետևապես սուբսիդավորման 2, 400 000 (3,000,000-600,000) շարունակվելու է սուբսիդավորվել մոտ 1 մլն դրամը (3-րդ երթուղու համար): Այս պարագայում համայնքին անհրաժեշտ կլինի լրացուցիչ ևս 1 մլն 300 հազար դրամ (եթե նվազեցնենք գործող ընկերության շահույթի մասնաբաժինը և այլ ծախսերը):

Փակ բաժնետիրական ընկերություն հիմնադրելու դեպքում լրացուցիչ կպահանջվի ևս ամսական մոտ 1,000,000-2,000,000 դրամ (աշխատավարձ, պարտադիր վճարներ, պահպանման ծախսեր):

Հանրագումարում՝ 2 երթուղային գծերը համայնքային ՓԲԸ-ի միջոցով իրականացնելու համար և 1 երթուղային գծի սուբսիդավորման նվազագույն ծավալի պահպանման դեպքում համայնքին անհրաժեշտ կլինի նվազագույնը 2.8 մլն դրամ (500,000+1,000,000+1,300,000)՝

1. https://www.kapan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=bca56125-ecd3-4f54-afe8-c4fd5915501e

ներկայիս նվազագույնը 3.0 մլն դրամ փաստացի սուբսիդավորման դիմաց: Հետևապես ֆինանսական տեսանկյունից էական դրական ազդեցություն չի ունենա:
Միաժամանակ, մրցակցության առումով, համայնքի կողմից 50 դրամով սպասարկման ծառայություն կազմակերպելու դեպքում մասնավոր ընկերությունները նման գնային գործոնի ազդեցության պարագայում մրցունակ չեն լինի և կդադարեցնեն իրենց գործունեությունը»:
Էկոնոմիկայի նախարարի ներկայացրած առարկությունը հիմք ընդունելով, ՏԿԵ նախարարությունը չի ընդունել հայտը:
Ճիշտ է, ծրագրային երկու հայտերը վերաբերվում են Կապան քաղաքին, սակայն քննարկման ժամանակ չի ներկայացվում՝
սուբվենցիոն ծրագրի համար համայնքի բնակավայրերում կարիքների գնահատում իրականացվե՞լ է, թե՝ ոչ և ինչո՞ւ է առաջնահերթությունը տրվել այս ծրագրերի իրականացմանը, որքանո՞վ էր հիմնավորված դրանց հրատապությունը:
Համայնքապետարանի աշխատակիցների հետ հավաքը կարող է համարվել աշխատանքային քննարկում, բայց ոչ հանրային քննարկում: Ինչո՞ւ համայնքի բնակիչները չեն մասնակցել քննարկմանը: Համայնքապետարանն, արդյոք, շահագրգռվածություն ունեցե՞լ է բնակչությանը ներգրավելու ծրագրային հայտերի ձևավորմանը: Ի՞նչ գործիքակազմ է կիրառվել բնակչությանն իրազեկելու համար:
Ըստ Կապանի համայնքապետարանի տրամադրած հանրային լսումների վերաբերյալ կազմված արձանագրության՝ 2019թ. փետրվարի 22-ին Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում հրավիրվել է Կապան համայնքի 2019-23թթ.-ի զարգացման ծրագրի, տարեկան աշխատանքային ծրագրի և սուբվենցիայի ծրագրերի հանրային քննարկում:
1) Համայնքի ղեկավարը երկու սուբվենցիոն ծրագիր ներկայացնելու մասին է հայտարարել
2) Կապան քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում
Հասարակական տրանսպորտի համար ավտոբուսների ձեռքբերում:
Հայտերի կարևորությունը համայնքի ղեկավարը հետևյալ կերպ է հիմնավորել. հայտնել է, որ իր կարճատև պաշտոնավարման ընթացքում 30-35 դիմում է ստացել, որով բնակիչները խնդրում են բազմաբնակարան շենքերի տանիքները վերանորոգել: Ծրագրով նախատեսվում է նորոգել 32 տանիք, որից 24՝ լանջավոր, 8-ը՝ հարթ:
Երկրորդ հայտի վերաբերյալ տեղեկացրել է, որ յուրաքանչյուր ամիս համայնքային բյուջեից 3-3,5 մլն դրամով սուբսիդավորում են համայնքի երկու երթուղիները սպասարկող կազմակերպությանը, որպեսզի բնակչությանը ծառայությունը մատուցվի 50 դրամով: Ավտոբուսներ ձեռք բերելու նպատակն այն է, որ կրկին 50 դրամով սպասարկեն այդ երթուղիները և համայնքային բյուջեի բեռը թեթևանա:
Արձանագրվել է, որ «հանրային քննարկման մասնակիցները միանշանակ կողմ գտնվեցին համայնքի համար այս կարևոր խնդրին անդրադառնալուն և սուբվենցիայի ծրագրերին դիմելուն»: Նշենք, որ քննարկմանը մասնակցել է 22 հոգի, ճնշող մեծամասնությունը համայնքապետարանի աշխատակիցներն են և ավագանու անդամներ: Նշված հայտերն այնուհետև ներկայացվել են համայնքի ավագանու հաստատմանը:
Հանրային լսում իրականացնելու վերաբերյալ պաշտոնական կայքում հայտարարություն է տեղադրվել 3 «2019 թվականի փետրվարի 22-ին՝ ժամը 15:00-ին, համայնքապետարանի նիստերի դահլիճում կքննարկվի Կապան համայնքի 2019-2023թթ. զարգացման ծրագիրը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Կապան համայնքի կողմից 2019 թվականին նախատեսվող սուբվենցիայի ծրագրերը և Կապան համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը»: **2020թ.-ին Կապան համայնքը հինգ ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու**

նպատակով, որը հաստատվել է համայնքի ավագանու 2020թ. մարտի 4-ի N 24-Ա որոշումով [2]

մեկ ծրագրային հայտ է հաստատվել՝ «Կողային բարձման երկու աղբատար մեքենայի ձեռքբերում:

Ավագանու 23 ապրիլի 2020թ. N 38-Ա որոշումով ևս 5 ծրագրային հայտ է հաստատվել [3]

1) Կապան քաղաքի բազմաբնակարան շենքերի հարթ և լանջավոր տանիքների նորոգում
2) Կապան քաղաքի հասարակական շենքերի /արվեստի թանգարան, Զորք թաղամասի ակումբ-գրադարան, ՔԿԱԳ գրասենյակ
3) Կապան համայնքի Եղվարդ գյուղի խմելու ջրագծի կառուցում և Ագարակ գյուղի ջրագծի վերանորոգում ու ՕԿՁ-ի կառուցում, խմելու ջրի ներքին ցանցի կառուցում
4) Կապան համայնքի Կապան քաղաքի թիվ 8 և Դավիթ Բեկ բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգում և Վարդավանք բնակավայրում այլընտրանքային ՆՈՒՀ-ի համար նախատեսվող շենքի նորոգում
5) Կապան համայնքի /Կապան, Գեղանուշ և Արծվանիկ բնակավայրեր/ ներհամայնքային ճանապարհների, փողոցների, մայթերի և բակերի հիմնանորոգում:

Ըստ Կապանի համայնքապետարանի տրամադրած արձանագրության, 2020թ. սուբվենցիոն ծրագրեր ներկայացնելու նպատակով 2019թ. դեկտեմբերի 17-ին Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում հանրային քննարկում է տեղի ունեցել: Համայնքի ղեկավարը ներկայացրել է վերը նշված ծրագրերը, «որոնք ողջունել են հանրային քննարկման մասնակիցները»՝ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, ավագանու անդամներ, համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավարներ և աշխատակիցներ, մասնակիցների թիվը 37 հոգի:

2021թ.Կապան համայնքը հինգ ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով, որը հաստատվել է համայնքի ավագանու 03 հունիսի 2021թ. N 51-Ա որոշումով [4]

1) Կապան համայնքի հասարակական շենքերի նորոգում. Ծավ բնակավայրի վարչական շենքի, Վերին Խոտանան բնակավայրի հանդիսությունների սրահի նորոգում, Չափնի բնակավայրի հանդիսությունների սրահի նորոգում, Շիկահող բնակավայրի ակումբի շենքի տանիքի վերանորոգում, Դավիթ Բեկ գյուղի մշակույթի տան շենքի վերականգնում, Վարդավանք գյուղի ակումբի շենքի վերանորոգում, Արծվանիկ բնակավայրի բուժկետի վերանորոգում, թիվ 3 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի կառուցում, Մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգում:
2) Կապան համայնքի Սևաքար գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում, Վարդավանք գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում, Չափնի գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում:
3) Կապան համայնքի Աճանան գյուղի ոռոգման համակարգի վերակառուցում:
4) Կապան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի 12 նկուղային և կիսանկուղային հարկերի նորոգում, Կապան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի 16 հարթ և 9 լանջավոր տանիքների վերանորոգում:

[2] https://www.kapan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=e6d36d6e-dbd8-401d-92e0-932fc3d82e97
[3] https://www.kapan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=86878709-25b6-4727-87e3-7ae288b7e7bb:
[4] https://kapan.am/Pages/DocFlow/default.aspx?nt=1&a=v&g=aadb66da-8e3c-4993-8526-a527bb84cb5e

5) Կապան քաղաքի Դավիթ Բեկ հրապարակի և մի շարք փողոցների և շենքերի բակերի հիմնանորոգում, հենապատերի վերանորոգում, Կավարտ գետակի մի հատվածի մաքրում և հենապատի վերանորոգում շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ:

Ըստ Կապանի համայնքապետարանի տրամադրած արձանագրության, 2021թ. սուբվենցիոն ծրագրեր ներկայացնելու նպատակով 2021թ. հունվարի 25-ին Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում հանրային քննարկում է տեղի ունեցել: Համայնքի ղեկավարը ներկայացրել է վերը նշված ծրագրերը, սուբվենցիայի ծրագրերին դիմելու նախաձեռնությունն արժանացել է հանրային քննարկման մասնակիցների դրական արձագանքին:

«Հանրային քննարկմանը» մասնակցել են 15 հոգի՝ համայնքապետարանի աշխատակիցներ, ավագանու անդամներ:

Հանրային լսում իրականացնելու վերաբերյալ պաշտոնական կայքում հայտարարություն տեղադրվել է հետևյալ հղումով:

«2021 թվականի հունվարի 25-ին ժամը 15:00-ին Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի կունենա Կապան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի, Հայաստանի Հանրապետության **համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի /ՏԱՊ-ի և սուբվենցիայի ծրագրերի ամփոփը կցվում է/ հանրային քննարկումը**, ինչպես նաև Կապան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը»:

Հայտարարությամբ առաջարկվում է ծանոթանալ 2021 թվականին նախատեսվող ծրագրերին և առաջարկություններ ուղարկել համայնքապետարանի էլեկտրոնային հասցեով:

2022թ.-ին Կապան համայնքը 7 ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով, որը հաստատվել է համայնքի ավագանու 25 ապրիլի 2022 թ. N 61-Ա որոշումով[5]

1) Կապան քաղաքի մի շարք փողոցների և բակերի հիմնանորոգում:

2) Կապան համայնքի հասարակական շենքերի նորոգում և կառուցում՝ Եղվարդ բնակավայրի կենցաղի տան վերանորոգում, Ծավի բնակավայրի կենցաղի տան վերանորոգում, Ըրկենանց բնակավայրում վարչական շենքի կառուցում և տարածքի բարեկարգում, Վանեք բնակավայրում վարչական շենքի կառուցում և տարածքի բարեկարգում, Եղեգ բնակավայրում վարչական շենքի կառուցում և տարածքի բարեկարգում, Ներքին Խոտանան բնակավայրում վարչական շենքի կառուցում և տարածքի բարեկարգում, Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ շենքի մասնակի վերանորոգում և ջեռուցման համակարգի վերականգնում, Կապան քաղաքի Վաչագան թաղամասի հանդիսությունների սրահի մասնակի վերանորոգում և Օխտար բնակավայրի ակումբի շենքի հիմնանորոգում:

3) Կապան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ և լանջավոր տանիքների նորոգում:

4) Կապան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների նորոգում՝ Կապանի թիվ 9 ՆՈՒՀ-ի շենքի վերակառուցում և տարածքի բարեկարգում, Կապանի թիվ 10 ՆՈՒՀ-ի շենքի վերանորոգում և տարածքի բարեկարգում:

5) Կապան քաղաքի մի շարք բնակելի շենքերի հարևանությամբ խաղահրապարակի և մարզադաշտի վերանորոգում ու հանգստյան գոտու կազմակերպում:

6) Կապան քաղաքում ապաստարանների կառուցում (գաղտնի):

[5] https://www.kapan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=b369e850-5a12-40ee-9136-6cc894fcbad8

7) Կապան համայնքի Դավիթ Բեկ, Սրաշեն և Կաղնուտ բնակավայրերի խմելու ջրամատակարարման ապահովում:
Ըստ Կապանի համայնքապետարանի տրամադրած արձանագրության, 2022թ. սուբվենցիոն ծրագրեր ներկայացնելու նպատակով 2022թ. մարտի 15-ին Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում հրավիրվել է հանրային քննարկում՝ հետևյալ օրակարգով՝ համայնքի 2022-26թթ. հնգամյա զարգացման ծրագիր, 2022թ. տարեկան աշխատանքային պլան և սուբվենցիայի ծրագրեր:
Մասնակցել են՝ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, ավագանու անդամներ, համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավարներ և աշխատակիցներ, մի քանի քաղաքացի թվով՝ 37 հոգի:
Կապան համայնքի ղեկավարի տեղակալի խոսքով, չնայած 2022թ.սուբվենցիոն ծրագրի նախնական հայտով ջրագծի ծրագիր ներկայացված չէ, սակայն հաշվի առնելով խնդրի հրատապությունը, հնարավոր է համայնքը լրացուցիչ դիմի մարզպետարանի միջնորդությանը՝ սահմանամերձ մի քանի գյուղի խմելու ջրագծերի նորոգման և կառուցման աշխատանքները 2022թ. սուբվենցիայի ամբողջական փաթեթով ներկայացնելու համար:
«Հանրային քննարկման մասնակիցները ողջունեցին սուբվենցիայի ծրագրերին դիմելու նախաձեռնությունը, այն արժանացավ հանրային քննարկման մասնակիցների դրական արձագանքին»,- նշված է արձանագրության մեջ:
Հարցազրույցներ թիրախ խմբերի հետ.
Կապան համայնքում հարցված 32 բնակչից ոչ ոք մասնակցություն չի ունեցել որևէ հանրային քննարկման: Կապանում սուբվենցիոն ծրագրերի մասին տեղյակ չէին բնակիչները, ոմանք անգամ սուբվենցիոն ծրագիր հասկացությունից են անտեղյակ:
Կապանի փոխհամայնքապետ Գոռ Թադևոսյանը պնդում է, որ իրենք իրազեկումը կատարում են ըստ օրենքի, սակայն մարդիկ հետաքրքրվում և մասնակցում են միայն այն ժամանակ, երբ այդ քննարկումներում որևէ շահ ունեն: Կապանի փոխհամայնքապետի կարծիքով՝ իզուր է տանել և որևէ գյուղում քննարկում կազմակերպել, անգամ ավագանիները հետաքրքրված չեն և չեն ցանկանում մասնակցել:

Ամփոփում
Կապան համայնքը խոշորացվել է 2017թ. նոյեմբերին, այն բազմաբնակավայր համայնք է, որի կազմում Կապան քաղաքի հետ միավորվել են 38 գյուղեր: Սուբվենցիոն ծրագրերը, հիմնականում, իրականացվում են Կապան քաղաքում:
Կապան համայնքի պաշտոնական կայքում՝ www.kapan.am տեղադրված են Կապան համայնքի կողմից 2019թ.-ին տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրային հայտերը հաստատելու մասին ավագանու կայացրած որոշումը և երկու ծրագրային հայտերը:
Ուսումնասիրված ժամանակահատվածում ծրագրեր են իրականացվել համայնքի բազմաթիվ բնակավայրերում: Ուսումնասիրված 4 տարիներին հանրային լսումների վերաբերյալ հայտարարություն է հրապարակվել երկու անգամ՝ 2019 և 2021թ.-ին: Ընդ որում, հայտարարությունները միայն սուբվենցիոն ծրագրերը ներկայացնելու համար չեն հայտարարվել: Նույն օրը միաժամանակ քննարկման է դրվել մի քանի կարևոր փաստաթուղթ՝ Կապան համայնքի 2019-2023թթ. զարգացման ծրագիրը, տարեկան աշխատանքային պլանը, սուբվենցիայի ծրագրերը և այլն: Մեկ ուրիշ անգամ՝ նախորդ տարվա բյուջեի կատարման հաշվետվությունը, տարեկան աշխատանքային պլանը և

սուբվենցիայի ծրագրերը: Ներկայացված 4 տարիների արձանագրություններից հետևյալ հետևությունը կարող ենք անել՝

1) Քանի որ հնգամյա ռազմավարական պլանը, տարեկան աշխատանքային պլանը և սուբվենցիոն ծրագրերը միաժամանակ են ներկայացվում քննարկման, նշանակում է, որ դրանցում ներառված համայնքային հիմնախնդիրներից ոչ մեկը բնակչության հետ ունեցած քննարկումների արդյունքում չի բացահայտվել:

2) Քննարկման ժամանակ մասնակիցներին ոչ թե առաջարկվել է ներկայացնել համայնքային խնդիրները, որից հետո դրանք դասակարգել և քվեարկել ըստ առաջնահերթության, այլ ներկայացվել է երկու ծրագիր, որոնք արդեն որոշվել էր, որ պետք է ներկայացնել սուբսիդիայի ֆինանսավորում ստանալու համար: 2021թ.-ի հանրային քննարկում հրավիրելու հայտարարության մեջ այդպես էլ նշվում է. «ՏԱՊ-ի և սուբվենցիայի ծրագրերի ամփոփը կցվում է»

3) Մի քանի բնակավայրի համար նման ծավալուն ծրագրերը 15-ից մինչ 37 հոգով քննարկումը հանրային անվանելը ճիշտ չէ, ավելի ճիշտ է այն անվանել աշխատանքային ժողով: Համաձայն արձանագրության՝ մասնակիցները եղել են՝ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարները, ավագանու անդամները, համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավարները և աշխատակիցներ, և մի քանի բնակիչ:

4) Ներկայացված ծրագրերի առաջնահերթությունն, անշուշտ կփոխվեր, եթե յուրաքանչյուր բնակավայրի կարիքների գնահատում արվեր այդ բնակավայրերում հանրային քննարկումներ կազմակերպելով: Այնուհետև դրանք բոլորը միասին ներկայացվեր հանրային քննարկման՝ առաջնահերթությունը որոշելու համար: Մեր կարծիքով՝ այդ դեպքում 2022թ.-ին սուբսիդիայի համար ֆինանսավորման կներկայացվեին ոչ թե մի շարք բնակավայրերում վարչական շենքերի կառուցում և տարածքի բարեկարգում ծրագրային հայտերը, այլ՝ **սահմանամերձ մի քանի գյուղի խմելու ջրագծերի նորոգման և կառուցման աշխատանքները: Դրանց հրատապությունը զեկուցողը կարևորել է քննարկման ժամանակ և հայտնել է, որ հնարավոր է համայնքը լրացուցիչ դիմի մարզպետարանի միջնորդությանը՝ 2022թ. սուբվենցիայի ամբողջական փաթեթով ներկայացնելու համար:** Հավելյալ տեղեկացնենք, որ մարզպետարանի ներկայացուցիչն այդ հարցը վերջերս ներկայացնում էր ԱՄՆ ֆինանսավորմամբ նոր մեկնարկող ջրային ծրագրի կառավարիչներին:

Կարևոր է հասկանալ նաև, թե ի**նչո՞ւ բնակչությունը մասնակից չէ քննարկմանը, որը համայնքապետարանը հանրային է անվանում:**

Կապանում փոխհամայնքապետ Գոռ Թադևոսյանը անօգուտ է համարում բնակավայրերում քննարկումներ կազմակերպելը:

Համայնքապետարանն անհրաժեշտ գործիքակազմ չի կիրառել քննարկման մասին հանրային լայն իրազեկում կազմակերպելու համար: Միայն երկու անգամ իրազեկման պասիվ ձևն է կիրառել՝ համայնքի պաշտոնական կայքի հայտարարություններ բաժնում քննարկման օրվա ու ժամի մասին տեղեկացնելով: Քանի որ ներկայացված արձանագրությունները կազմվել են միայն սուբվենցիայի ծրագրերի մասով, չնայած այդ օրն, ըստ արձանագրության, այլ փաստաթղթեր էլ են դրվել քննարկման, կնշանակի նպատակը լուրջ քննարկում կազմակերպելը չի եղել: Այն կազմվել է միայն միջգերատեսչական հանձնախմբին արձանագրություն ներկայացնելու համար, որը հայտի փաթեթի կարևոր փաստաթղթերից մեկն է:

Կառավարության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիա տրամադրելու նպատակով ընդունած 2019թ. մարտի 19-ի 278-Ա «Միջգերատեսչական հանձնաժողով

ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» որոշման **12-րդ կետը վերաբերում է սուբվենցիայի ամբողջական փաթեթին:** Սուբվենցիայի հայտը ի թիվս այլ փաստաթղթերի, պետք է **ներառի նաև ծրագիրն իրականացնելու նպատակով կազմակերպված հանրային լսումների արձանագրությունը:**

Գորիս համայնքի սուբվենցիոն հայտերի ընդունման և հաստատման ընթացակարգի ուսումնասիրություն ըստ տարիների

2019թ.-ին Գորիս համայնքը 5 ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 9 մարտի N 13-Ա որոշումով[6]

1) Գորիս համայնքի ռազմավարական և տնտեսական նշանակության ճանապարհների հիմնանորոգում, ասֆալտապատում
2) Գորիս համայնքի ճանապարհների հիմնանորոգում, ասֆալտապատում
3) Գորիս համայնքի թիվ 7 ՆՈՒՀ ՀՈԱԿ–ի նորոգում
4) Գորիս համայնքի Խնձորեսկ բնակավայրում կապտաժների կառուցում, ոռոգման համակարգի կառուցում-նորոգում
5) Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի «Վարպետաց գյուղում» արվեստների կենտրոնի հիմնում, տնտեսական հնարավորությունների խթանում, հասարակական շենքերի վերանորոգում (մշակույթի տուն, համայնքային կենտրոն):

Գորիսի համայնքապետարանը 2019թ. հանրային քննարկում իրականացնելու մասին արձանագրությունը չի տրամադրել: Համայնքի պաշտոնական կայքում հանրային լսում իրականացնելու մասին հայտարարություն չի տեղադրվել:

2020թ.-ին Գորիս համայնքը 2 ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 26 ապրիլի 2020 թ. N 23-Ա որոշումով[7]

1) Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրում կապտաժի և ջրագծի կառուցում
2) Գորիս քաղաքի Արզումանյան փողոցի, Սևյան նրբանցքի և Ավանագարդ 4-րդ փողոցի հիմնանորոգում:

Հանրային քննարկում. Գորիսի համայնքապետարանի տրամադրած արձանագրության համաձայն՝ 2020թ. ապրիլի 16-ին Գորիսի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրային քննարկում, որի ժամանակ համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը ներկայացրեց համայնքի տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված մի քանի գաղափարներ և առաջնահերթ խնդիրներ: Ներկայացրեց երկու ծրագրերի կարևորությունը, տեղեկացրեց, որ այդ ծրագրերը նախատեսվում է իրականացնել սուբվենցիայի շրջանակում: Քննարկման մասնակիցները կարևորել են ճանապարհների բարելավմանն ուղղված ցանկացած նախաձեռնություն:

Մասնակցում էին երիտասարդներ, համայնքում գործող մշակույթի, արվեստի բնագավառի ներկայացուցիչներ, վարչական ղեկավարներ, շահագրգիռ այլ անձինք: Արձանագրության մեջ մասնակիցների թվաքանակ չի նշվում, և բովանդակությունից հետևություն կարող ենք անել, որ հավաքը մասնակիցներից առաջարկներ լսելու նպատակ չուներ, այն նախապես ընտրած երկու ծրագրերը ներկայացնելու համար էր:

Գորիսի համայնքապետարանի կայքի **հայտարարություններ** բաժնում համայնքի տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի վերաբերյալ հանրային քննարկումների մասին միայն մեկ հայտարարություն[8] է տեղադրված: «Գորիսի

[6] https://www.goriscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=6f280978-515f-42fe-8457-65ea5c559bc7
[7] https://www.goriscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=cd321f14-989f-447a-83af-fc9396f85c92
[8] https://www.goriscity.am/Pages/Misc/Announces/View.aspx?recId=504#.Y4yHI3ZBxPY

համայնքապետարանը համայնքի բնակիչներին, բոլոր շահագրգիռ կողմերին, ՔՀԿ և ՁԼՄ ներկայացուցիչներին հրավիրում է մասնակցելու մարտի 26-ին, ժամը 16.00-ին կայանալիք հանրային քննարկումներին, որոնք վերաբերելու են համայնքի տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերին:
Քննարկվելու են հետևյալ ծրագրերը՝
1) Կապտաժի և ջրագծի կառուցում՝ Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրում
2) Բազմաբնակարան սոցիալական շենքի վերակառուցում
3) Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում, /Ավանգարդ թաղամասի Սևյան 1 փողոցի ասֆալտապատում, Մաշտոցի փողոցի մի հատվածի ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքներ/ Մաշտոցի և Նարեկացի փողոցների խաչմերուկից դեպի Դիտակետ անվանյալ տարածք/խաչմերուկից մինչև Մաշտոց-Սարյան փողոցների հատման հատվածի կապիտալ նորոգում՝ ճանապարհի ասֆալտապատում, մայթերի նորոգում:
Հանրային քննարկումը տեղի կունենա Գորիսի համայնքապետարանի նիստերի դահլիճում»:
2021թ.-ին Գորիս համայնքը 3 ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 27 ապրիլի 2021թ. N 37-Ա որոշումով[9]
1) Գորիս-Վերիշեն-Ակներ ավտոճանապարհի 1.4 կմ հատվածի ասֆալտապատման աշխատանքներ
2) Գորիս համայնքի Արտաշիսյան փողոցի 960 մ հատվածի ասֆալտապատման աշխատանքներ
3) Գորիս համայնքի Մաշտոցի փողոցի 230 մ հատվածի և Դիտակետի ճեմուղու 450 հատվածի ասֆալտապատում:
Հանրային քննարկում. Գորիսի համայնքապետարանի տրամադրած արձանագրության համաձայն՝ 2021թ. ապրիլի 27-ին Գորիսի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրային լսում: Այն վարում էր Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը: Նա ներկայացրեց, որ նշված ճանապարհները գտնվում են անբարեկարգ վիճակում, նախատեսվում է ասֆալտապատել և հիմնանորոգել նշված փողոցների հատվածները: Արտահայտվեցին ներկաները և օնլայն մասնակիցները:
Արձանագրության մեջ նրանց հայտնած մտքերի, ինչպես նաև մասնակիցների քանակի մասին տեղեկություններ չկան:
Համայնքի պաշտոնական կայքում հանրային լսում իրականացնելու մասին հայտարարություն չի տեղադրվել:

2022թ.-ին Գորիս համայնքը 4 ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 21 ապրիլի 2022թ. N 56-Ա որոշումով[10]
1) Գորիս համայնքի Ավանգարդ 5-րդ թաղամասի մոտեցման ճանապարհների հիմնանորոգում
2) Թիվ 3 ՆՈՒՀ-ի հիմնանորոգում
3) Գալստյան փողոցի մի հատվածի, Գալստյան փողոցի թիվ 60 բազմաբնակարան շենքի բակի, Մաշտոցի փողոցի թիվ 146; 148; 150 բնակելի շենքերի բակերի ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքներ
4) Քարահունջ բնակավայրի կոյուղու ցանցի և ջրամատակարարման ցանցի վերակառուցում:

[9] https://www.goriscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=1fb5ca84-b438-46a4-8012-a3a2503d1dc2
[10] https://www.goriscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=1f4728fa-c4ee-4a6f-92c6-5740c1387df2

Հանրային քննարկում. ըստ Գորիսի համայնքապետարանի տրամադրած արձանագրության՝ «2022թ. ապրիլի 4-ին Գորիսի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրային քննարկում: Այն վարել են Գորիս համայնքի ղեկավարի խորհրդական Կարեն Ջավահիրյանը և ավագանու անդամ Իրինա Յոլյանը: Քննարկման են ներկայացվել այն ծրագրերը, որոնք նախապես պլանավորված են եղել սուբվենցիոն ծրագրին ներկայացնելու համար: Մասնակցել են Գորիսում գտնվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, բնակիչներ, մտավորականներ, որոնք քննարկեցին իրականացվող ծրագրերի հրատապ լինելը և կարևորեցին սպասվելիք աշխատանքները»: Արձանագրության մեջ նրանց հայտնած մտքերի, ինչպես նաև մասնակիցների քանակի մասին տեղեկություններ չկան:
Հանրային քննարկում իրականացնելու մասին **հայտարարություն** է տեղադրվել համայնքի պաշտոնական կայքում[11]
Գորիս համայնքի սուբվենցիայի հայտերը կցված են ավագանու որոշումներին, իսկ հաստատված հայտերը տեղադրված են համայնքապետարանի կայքում: Ըստ Գորիսի համայնքապետարանի տրամադրած տեղեկատվության՝ ներկայացված բոլոր հայտերը հաստատվել են, Սյունիքի մարզպետարանը ոչ մի հայտ չի մերժել:

Հարցազրույցներ թիրախ խմբերի հետ.
Քարահունջ բնակավայրի բնակիչը նշում է, որ մասնակցել է հանրային քննարկմանը, որը վերաբերում էր գյուղի կոյուղու ցանցի ջրամատակարարման ցանցի վերակառուցմանը: «Ծանոթներից եմ տեղեկացել, որ համայնքապետարանում պետք է հանրային քննարկում լինի: Մեր գյուղի համար հրատապ էր կոյուղու ցանցի վերակառուցումը»,-նշել է հարցվողը:
Նույն գյուղի մեկ այլ բնակիչ դժգոհել է հանրային լսումներից. **«**Ոչ մի հանրային քննարկման չեմ մասնակցել երբևէ, քանի որ ոչ մի անգամ տեղեկացված չեմ եղել, որ հանրային քննարկում պետք է անցկացվի համայնքապետարանում: Միշտ չէ, որ հետևում եմ համայնքապետարանի կայքին, սակայն ցանկություն ունեմ մասնակցելու հանրային քննարկումներին և ներկայացնելու իմ առաջարկները»:
Հարցվողներից մեկը նշել է, որ համայնքապետարանը պետք է հայտարարությունը տարածի նաև սոցիալական ցանցերով, կամ էլ պարզապես փոքր բնակավայրերում մեկը մյուսին տեղեկացնելով, որպեսզի համայնքի խնդիրներով հետաքրքրված բնակիչները կարողանան մասնակցել հանրային քննարկումներին: Քարահունջի կոյուղու և ջրամատակարարման ցանցի վերակառուցումն առաջնահերթ է, սակայն գոհ չի արված աշխատանքից:
Որոշ հարցվողներ պատասխանել են, որ իրենք երբևէ չեն մասնակցել հանրային **և** հետաքրքրված չեն, թե որտեղ կամ ինչպես է անցկացվում այն:
Կան հարցվողներ, ովքեր նշում են, որ տեղյակ են, թե ինչ սուբվենցիոն ծրագրեր են իրականացվում իրենց բնակավայրում:
Նրանք, ովքեր ցանկություն են հայտնել տեղեկանալ հանրային լսումներին և մասնակցել, կարծում են, որ այդ միջոցով կարող էին բարձրացնել բնակավայրի խնդիրները, քանի որ ավագանուն չեն վստահում: Օրինակ, Խնձորեսկում նշում են, որ գյուղի առաջնահերթ խնդիրներից մեկը շարունակում է մնալ խմելու ջուրը, քանի որ կապտաժների կառուցումից հետո էլ բնակիչները օրվա մեջ միայն մի քանի ժամ են ջուր ունենում, և հատկապես ամռան ամիսներին խմելու ջուր չունենալը դառնում է հրատապ խնձորեսկցիների համար:
Գորիս համայնքի ղեկավարի տեղակալ Իրինա Յոլյան. «Ընդհանուր առմամբ, համայնքապետարանը կարևորում է համայնքի համաչափ զարգացումը և համայնքի

[11] https://www.goriscity.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=588#.Y42LUXZBxPY:

ղեկավարը շատ հաճախ լինում է բոլոր բնակավայրերում, հանդիպում է բնակիչների հետ: Համայնքի ղեկավարն ընդունելության հատուկ օրեր չունի, գրեթե ամեն օր քաղաքացիներ են գալիս, տարբեր հարցերով, տարբեր խնդիրներով ու բոլորը գրառում ենք: Շատ լավ տիրապետում ենք իրավիճակին, թե համայնքի որ հատվածում ինչ խնդիրներ ունենք և փորձում ենք լուծել: Ամեն անգամ հանդիպումների ժամանակ, բնակիչները բարձրաձայնում, ահազանգում են խնդիրների մասին: Բնակավայր առ բնակավայր, մենք ունենք, թե ինչ խնդիրներ կան, և ամեն տարի, որը հնարավոր է՝ սուբվենցիոն ծրագրերով ենք իրականացնում, որը հնարավոր չէ՝ փորձում ենք դոնորների միջոցով իրականացնել:
Մեր քաղաքականությունն այսպիսին է՝ յուրաքանչյուր տարի ներդրումներ անենք և ճանապարհաշինության ցանցի բարելավման ուղղությամբ ծրագրեր իրականացնենք: Գորիսում, հիմնականում, բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգման համար ամեն տարի փորձում ենք խոշոր ներդրում իրականացնել, երկարաժամկետ արդյունք ապահովող ծրագրեր իրականացնել և աստիճանաբար, թաղամաս առ թաղամաս՝ համայնքի ճանապարհային ցանցը բարելավել:
Իսկ թե ինչպե՞ս են որոշվում ծրագրերի առաջնահերթությունները՝ ասեմ, որ չկա մի այնպիսի սկզբունք, որ քաղաքի կենտրոնը պիտի կապիտալ վերանորոգվի, իսկ ծայրամասերը՝ ոչ: Մեր ուշադրության կենտրոնում են ծայրամասային թաղամասերը, որոնք տասնյակ տարիներ չեն նորոգվել, որևէ շինարարական աշխատանք չի արվել»:
Ի. Յոլյանը նշում է, որ հանրային քննարկումներն անց են կացվում ըստ ընթացակարգի: Նրա խոսքով՝ համայնքը նախապես իր ծրագրերը ներկայացնում է տարբեր հանդիպումների ժամանակ, հանրային շրջանակների կարծիքը հաշվի է առնվում, որից հետո ավելի մեծ հանրային քննարկում է լինում: «Եթե մենք հանրային քննարկում ենք իրականացնում, դա չի նշանակում, որ մասնակիցները կարող են ամբողջական պատկեր տալ. եթե օրինակ, Խնձորեսկում խմելու ջրի խնդիր ունենք, բայց Գորիսում ենք հանրային քննարկումը կազմակերպել, և այդ քննարկման մասնակիցները կարևորում են որևէ թաղամասում խաղահրապարակի կառուցումը, չի նշանակում, որ կենսական նշանակության խնդիրն այդ խաղահրապարակն է և դա առաջնահերթություն է:
Համայնքի ղեկավարի խոսքով համայնքապետարանը շահագրգռված է, որ բնակիչներին մտահոգող հարցերին լուծումներ տան, որովհետև ի վերջո, ՏԻՄ-ի աշխատանքն ուղղված է բնակչի կյանքի որակի բարելավմանը: Որքանով որ քաղաքացիները ներկայացնում են այդ հարցերի իրական պատկերը, դրանք լուծելու ճանապարհով փորձում են համաչափ զարգացում ապահովել համայնքում:
«Պարտադիր չէ, որ հողի մշակն իր գործը թողնի Շուռնուխից կամ Որոտանից գա հասնի Գորիս, որպեսզի մասնակցի հանրային քննարկման, ընդհակառակը, տեղական իշխանություններն են գնում դեպի բնակիչը: Շատ հաճախ այդ ձևական հանրային քննարկումները խնդիր չեն լուծում, բայց երբ մենք ենք գնում սահմանամերձ բնակավայր, խոսում բնակիչների հետ, նրա կարիքը ճիշտ գնահատում, ավելի արդյունավետ է»-ասում է նա:
Քարահունջի վարչական ղեկավար Լուսինե Ավետյան. «Սուբվենցիոն ծրագիրն ընտրվել է բնակիչների առաջարկով, քանի որ նրանք համայնքի ղեկավարի մոտ ընդունելության ընթացքում բարձրաձայնել էին այդ մասին, անգամ բնակիչները թաղամաս առ թաղամաս դիմում են ներկայացրել համայնքի ղեկավարին: Կոյուղաջրերը հոսում էին փողոցներով և ստեղծում հակասանիտարական վիճակ, մարդիկ դեռևս հարմարեցված սանհանգույցներից էին օգտվում: Կոյուղաջրերի առկայությունը սողանքի ակտիվացմանն էր նպաստում, քանի որ բնակավայրի մի հատվածը սողանքային գոտում է գտնվում: Փոխվում է նաև դպրոցի կոյուղագիծը, քանի որ խցանվում էր և հարակից թաղամասի բնակիչներից անընդհատ

բողոքներ էինք ստանում: Ընդհանուր բնակիչների առաջարկները կապված էին կոյուղու ցանցի վերանորոգման հետ: Մեզ համար առաջնայինը հիմնականում կոյուղու և ջրամատակարարման ցանցի վերակառուցումն է»:

Ավագանու անդամ Նարեկ Օրդյան. «Վերիշեն բնակավայրում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրեր են իրականացվել, որոնց մասին և՛բնակիչներն են բարձրաձայնել, և՛ ես, և՛ վարչական ղեկավարը: Ես՝ որպես ավագանու անդամ և Վերիշենի բնակիչ, քաջատեղյակ եմ բոլոր հարցերին: Խմելու ջրի հարցը ֆինանսական մեծ ծախսեր էր պահանջում, և այն լուծվել է 2020թ. սուբվենցիոն ծրագրով: Հիմնականում այն հարցերն են լուծվում սուբվենցիոն ծրագրերով, որոնք առաջնային են»:

Խնձորեսկի վարչական ղեկավար Երվանդ Մալունց. «Գյուղի բնակիչների հետ քննարկվել էր խմելու ջրի հարցը, որը երկար տարիներ անլուծելի էր: Գյուղի բնակիչներն են առաջարկել, որպեսզի «Մոտիկ սար» կոչվող հատվածում կապտաժներ կառուցվի, և ջուրը հասնի գյուղ:

Ամփոփում

Գորիս համայնքը խոշորացվել է 2016թ. սեպտեմբերին, նրա մեջ միավորվել են 13 բնակավայրեր: Գորիսի համայնքապետարանն անցած չորս տարիներին սուբվենցիոն ծրագրեր է իրականացրել Գորիս քաղաքում և համայնքի հետևյալ բնակավայրերում՝

2019թ.–Խնձորեսկ, Ակներ, Վերիշեն

2020թ.–Ակներ, Վերիշեն

2021թ.– Ակներ, Վերշեն,

2022թ.–Քարահունջ

Այսինքն, սուբվենցիոն ծրագրեր իրականացնելու 4 տարիների ընթացքում այս բնակավայրերից Ակներն ու Վերիշենը երեք տարիներին կրկնվել են, իսկ 5 գյուղերում՝ Հարթաշեն, Բարձրավան, Որոտան, Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, ոչ մի ծրագիր չի իրականացվել:

Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներն իրենց հարցազրույցներում հայտնում են, որ լավատեղյակ են բոլոր բնակավայրերի խնդիրներին, հետևաբար տեղերում հանրային քննարկումներ իրականացնելու անհրաժեշտություն չկա: Բայցևայնպես, ո՞վ է ընտրում, թե դրանցից որն է առաջնահերթը:

Տարին մեկ անգամ Գորիս քաղաքում հանրային քննարկում է հրավիրվում, որին մասնակից չեն առնվազն 5-7 գյուղերի բնակիչները: Հավաքի ժամանակ չեն ներկայացվում այդ գյուղերում բացահայտված հիմնախնդիրները, այդ բնակավայրերից չունեն ավագանի, որը նախանձախնդիր կլիներ բնակավայրի շահը պաշտպանելու հարցում: Գորիսում նույնպես քննարկման մասնակիցներին պարզապես տեղեկացվում է, թե ինչ ծրագիր են ներկայացնելու այդ տարի, առաջարկների չեն սպասում, ընտրության հնարավորություն չեն տալիս:

Գորիսի համայնքապետարանի պաշտոնական կայքում սուբվենցիոն հայտերի վերաբերյալ տեղեկատվությունը շատ սուղ է, երկու անգամ է հանրային քննարկման մասին հայտարարություն տեղադրվել՝ 2020թ. և 2022թ.-ին: Կայքի «Հանրային քննարկում» հղումը հնարավորություն է տալիս նաև առցանց առաջարկներ ներկայացնել կամ քվեարկվել առաջնահերթության համար, որն արդարությունը կպահպաներ: Սակայն, բնակիչներին նման առաջարկ չի արվել, համայնքի ֆեյսբուքյան էջը, որը շատ հետևորդներ ունի և տեղեկատվությունն արագ տարածելու լավագույն միջոցն է՝ չի ծառայեցվում բնակչության շրջանում լայն իրազեկում ապահովելուն և ծրագրերի հրապարակային ընտրությանը: Ֆեյսբուքյան էջում 2022թ. հանրային քննարկման վերաբերյալ որևէ հայտարարություն չկա տեղադրված: Հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունները երբեմն

տեղադրում են համայնքապետարանի կայքում, սակայն բոլոր բնակիչները չէ, որ տեղյակ են դրա մասին: Հարցումները ցույց են տալիս, որ մարդիկ հետաքրքրված են, թե ինչ սուբվենցիոն ծրագրեր է պլանավորում իրականացնել համայնքապետարանը: Հարցվածների մեջ կան մարդիկ, որոնք քննարկումներին մասնակցելու ցանկություն ունեն, սակայն այդ մասին իրազեկված չեն: Չորսը տարիների հանրային քննարկման վերաբերյալ կազմված արձանագրությունների մեջ մասնակիցների հայտնած մտքերի, ինչպես նաև մասնակիցների քանակի մասին տեղեկություններ չկան:
11.11.2022թ.ին համայնքապետարանի կայքում հայտարարություն է տեղադրվել Գորիս համայնքի 2023թ. սուբվենցիոն ծրագրերի հանրային քննարկում իրականացնելու վերաբերյալ: Ծրագրերի հանրային քննարկումը տեղի է ունեցել նոյեմբերի 25-ին, համայնքապետարանի նիստերի դահլիճում: Գորիսի մամուլի ակումբը լուսաբանել էր հանրային քննարկումը, և բնակիչներից մեկը մեկնաբանություն էր գրել ակումբի ֆեյսբուքյան էջում տարածած նյութի տակ՝ «իսկ հանրային քննարկման մասին որտե՞ղ էր հայտարարված, հետաքրքիր է շատ»:

Սիսիան համայնքի սուբվենցիոն հայտերի ընդունման և հաստատման ընթացակարգի ուսումնասիրություն ըստ տարիների

Սիսիան համայնքն առաջին անգամ խոշորացվել է 2017թ.-ին, Սիսիան քաղաքի հետ միավորվել է 31 բնակավայր, երկրորդ անգամ խոշորացվել է 2022թ. սեպտեմբերին: Գորայք համայնքը իր 4 բնակավայրերով միավորվեց Սիսիան համայնքի հետ: Քանի որ միավորումը տեղի ունեցավ հետազոտությունն իրականացնելու ժամանակահատվածում, այլևս հնարավոր չէ այն դիտարկել որպես առանձին համայնք, հետևաբար Գորայքին չենք անդրադարձել:

2019թ.-ին Սիսիան համայնքը յոթ ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 12 ապրիլի 2019թ. N 29-Ա որոշումով[12]

1) Լուսավորության համակարգի կառուցում Լոր, Շաղատ, Բալաք, Իշխանասար, Վաղատին, Անգեղակոթ բնակավայրերում և Սիսիան քաղաքում

2) Խանջյան, Մյասնիկյան-Արամ Մանուկյան -Շահումյան փողոցների, Սիսիան-Իշխանասար խճուղուց համայնքային նոր գերեզմանատուն տանող ճանապարհահատվածի կապիտալ վերանորոգում

3) Սիսիան քաղաքի Կ.Դեմիրճյանի անվան այգու և Բռնակոթ բնակավայրի հրապարակի բարեկարգում

4) Սիսիան քաղաքի Խանջյան 1ա, Սիսական 11, Սիսական 15, Սիսական 19, Սիսական 46, Արամ Մանուկյան 3 և Դաստակերտ բնակավայրի Ա.Ավետյան 1, Ա.Ավետյան 2, Ա.Ավետյան 4, Ա.Ավետյան 14, Ա.Ավետյան 15 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում

5) Ոռոգման համակարգի կառուցում Անգեղակոթ, Բռնակոթ և Որոտնավան բնակավայրերում

6) Սիսիան քաղաքի և Արևիս, Թասիկ, Սալվարդ, Բռնակոթ բնակավայրերում գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների համալրում

7) Սիսիանի համայնքի թիվ 2 և թիվ 3 ՆՈՒՀ-երի, Նորավան և Շամբ բնակավայրերում գտնվող խմբերի վերանորոգում և գույքի արդիականացում:

8) Սուբվենցիոն հայտերը չեն կցվել որոշմանը:

[12] https://www.sisian.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=27f2e4bc-f732-4462-bbce-dfe4b2723850

2020թ.-ին Սիսիան համայնքը հինգ ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 14 ապրիլի 2020թ. N 28-Ա որոշումով[13]

1) Լուսավորության համակարգի ընդլայնում Աշոտավան, Բալաք, Անգեղակոթ, Շաղատ, Իշխանասար, Ախլաթյան, Թասիկ բնակավայրերում և Սիսիան քաղաքում

2) Սիսիանի համայնքի Սայաթ-Նովա, Շահումյան, Ա.Մանուկյան փողոցները, Սյունիքի փողոցից Ույծ բնակավայր տանող ճանապարհահատվածի և Շաքի բնակավայրի կենտրոնական փողոցի հիմնանորոգում

3) Որոտնավան և Վաղատին բնակավայրերում նախադպրոցական կրթության ապահովում, Սիսիանի համայնքի թիվ 2 և թիվ 3 ՆՈՒՀ-երի, Նորավան, Շամբ և Տոլորս բնակավայրերում գտնվող խմբերի վերանորոգում և գույքի արդիականացում

4) Սիսիան քաղաքի Սիսական 31 հասցեի վարչական շենքի, Որոտնավան բնակավայրի վարչական շենքի տանիքի, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի և գեղարվեստի դպրոցի շենքերի տանիքների վերանորոգում, Սիսական 41 հասցեում գտնվող վարչական շենքի տանիքի և պատուհանների վերանորոգում:

5) Սիսիան քաղաքի Սիսական 13, Ն.Ադոնցի 6, Սիսական 34, Չարենցի 2, Չարենցի 4, Չարենցի 6, Չարենցի 8, Խանջյան 1, Խանջյան 3, Խանջյան 5, Խանջյան 7 և Որոտան 7 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում և Շահումյան 72, Սիսական 13, Սիսական 46 շենքերի էներգաարդյունավետ արդիականացում:

6) Սուբվենցիոն հայտերը կցված չեն որոշմանը:

Հանրային լսում. կայքում հայտարարություն տեղադրվել է[14]. . փետրվարի 24-ին՝ ժամը 11:00-ին, Սիսիանի համայնքապետարանի դահլիճում կկայանա հանրային բաց լսումներ 2019թ. տարեկան բյուջեի և համայնքի զարգացման ծրագրերի կատարման, ինչպես նաև 2020 թվականի սուբվենցիոն ծրագրային հայտերի վերաբերյալ: Հանրային լսումները հնարավորություն են տալիս առավել թափանցիկ ու բնակչության համար հասանելի և վերահսկելի դարձնել համայնքապետարանի գործունեությունը:

2021թ.-ին Սիսիան համայնքը երկու ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 21 մայիսի 2021թ. N 31-Ա որոշումով[15]

1) Սիսիան քաղաքի Սիսական 13, Ն.Ադոնցի 3, Սիսական 34, Չարենցի 2, Չարենցի 4, Չարենցի 6, Չարենցի 8, Խանջյան 1, Խանջյան 3, Խանջյան 5, Խանջյան 7 և Որոտան 7 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգում:

2) Սիսիանի համայնքի Որոտան 1, 3, 5, 7, Որոտան 2, 4, 6, 8, Որոտան 2ա, Շիրվանզադե 2ա, Գայի 3, 4, Խանջյան 1ա, 3ա, Հ.Ազոյան 2, 2/2, 4, 6, 8, 10 բազմաբնակարան բնակելի շենքերի փողոցների, Նար-Դոս, Նար-Դոս փողոցից Գ.Նժդեհ, Խանջյան փողոցի վերջնամաս, Ռաֆֆու, Ն.Ադոնց փողոցից Տեր-Ղազարյան, Ն.Ադոնցի փակուղի, Ա.Մանուկյան փողոցի մայթերի, Բռնակոթ բնակավայրի Վ.Ոսկանյան փողոցից դպրոց տանող ճանապարհահատվածի նորոգում:

Սուբվենցիոն հայտերը կցված չեն որոշմանը:

2022թ.-ին Սիսիան համայնքը երկու ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 29 ապրիլի 2022թ. N

[13] https://www.sisian.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=d4c5480c-9a01-4c03-886d-d0e0135c7cf2
[14] https://www.sisian.am/Pages/Misc/Announces/View.aspx?recId=537#.Y49wCnZBxPY 2020թ
[15] https://www.sisian.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=a13d6ffa-2be5-49cb-a72d-3fe71137b2b5

34-Ա որոշումով[16] Սիսիանի համայնքի Աղիտու և Վաղատին բնակավայրերում խմելու ջրագծերի վերանորոգում,
Սիսիանի համայնքի Ադամյան, Իսրայելյան և Պարույր Սևակի փողոցների կապիտալ վերանորոգում:
Սուբվենցիոն հայտերը կցված չեն որոշմանը:
Հարցազրույցներ թիրախ խմբերի հետ.
բնակիչների կարծիքները
Սիսիան. «Ես երբևէ համայնքապետարանի քննարկումներին չեմ մասնակցել, բայց իմ ամուսինը ավագանու անդամ էր, ինչքան հիշում եմ՝ 2016-2018թթ.-ին, մենք Սիսիանի ծրագրերի հետ կապված շատ հարցեր էինք քննարկում»:
Հարցվողներից մեկը նշել է, որ ինքը 2020թ.-ից համայնքապետարան է դիմել Աղիտու գյուղի խմելու ջրի հարցով, սկզբում՝ բանավոր, հետո գրավոր: Պատասխանել են, որ պետք է սուբվենցիոն ծրագրով կատարվի այդ աշխատանքը, քանի որ մեծ գումարների հետ է կապված: Այնուհետև, նա իր փաստաբանի՝Արկադի Հովհաննիսյանի հետ միասին դիմել է կառավարություն և դրական պատասխան ստացել: «Ես տեղյակ եմ, որ Աղիտու և Վաղատին գյուղերի խմելու ջրի հարցը պետք է իրագործվի սուբվենցիոն ծրագրով, բայց այս ընտրական ընթացքը շատ վատ է ազդում այդ ծրագրերի իրագործման վրա: Նաև տեղյակ եմ, որ այդ ծրագիրը պետք է իրագործվեր մեկ տարվա ընթացքում, բայց դեռ ոչինչ չկա»,-ասել է հարցվողը:
Որոշ հարցվողներ կոնկրետ խնդիրների մասին են նշել հարցումներում, ինչպես, օրինակ. «Ես առաջարկում եմ այդ ծրագիրն անհապաղ իրագործել քանի դեռ ձյուն չկա: Ես ինքս Աղիտու գյուղում տուրիզմի զարգացման ծրագիր եմ իրականացնում «Դավթի տուն» հյուրատանը, որտեղ բիզնեսի առաջին խոչընդոտն է ջրի պակասը, և դրանից արդեն իսկ բիզնեսը շատ լուրջ վնասներ է կրում»:
«Միայն մեկ անգամ եմ մասնակցել համայնքապետարանում կազմակերպված քննարկմանը, որի ժամանակ քննարկվում էր Սիսիան համայնքի տարեկան բյուջեն: Քննարկման մասին տեղեկացել եմ համայնքապետարանի պաշտոնական կայքից: Քննարկում չէր, ավելի շատ ներկայացման էր նման, ընդհանուր առմամբ համաձայն էի, սակայն այդ ժամանակ բյուջեում պակասում էր երիտասարդներին հատկացվող գումարի չափը և տողը: Առաջարկվել ենք ավելացնել և շահերի պաշպանության խմբով ներկայացրել ենք երիտասարդական ռազմավարություն, որը հավանության է արժանացել, սակայն այդպես էլ չի իրագործվել: Ընդհանուր առմամբ տեղյակ եմ, թե ինչ սուբվենցիոն ծրագրեր են իրականացվում համայնքում: Իմ կարծիքով, ավելի առաջնահերթ խնդիրներ կան, քան այն ծրագրերը, որոնք հիմա իրականացվում են: Օրինակ, մի շարք գյուղական բնակավայրերում կա խմելու ջրի հարցը»-ասել է հարցման մասնակիցը:
Հարցումներից պարզվում է, որ մյուս համայնքների համեմատ, հանրային լսումների անցկացմամբ առավել հետաքրքրված են Սիսիան համայնքում նրանցից մեկը նշել է, որ ինքը հանրային լսումներից հետո հարցում ուղարկել Սիսիանի համայնքապետարան, ներկայացրել Վաղատին բնակավայրի խմելու ջրի ջրագծի անմխիթար վիճակը, խնդրել է տրամադրել տեղեկություններ, թե ում պարտականությունն է այս հարցի լուծումը և ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն այդ ուղղությամբ: Համայնքապետարանից պատասխանել են, որ այդ պահին համայնքի բյուջեում այդ նպատակով գումար չկա, բայց եթե ֆինանսավորում լինի, ապագայում հարցը կփորձեն լուծել: Նա պլանավորում է հաջորդ սուբվենցիոն ծրագրերի ներկայացման ժամանակ այդ խնդիրը բարձրաձայնել:

[16] https://www.sisian.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=008f2227-508a-46e4-8947-1614d5d521c8

Կան նաև հարցվողներ, որոնք կարծում են, որ հանրային լսումներին չեն մասնակցում, քանի որ անհետաքրքիր է, նաև առավել առաջնահերթ խնդիրներ կան համայնքում: Նաև վստահ չեն, որ իրենց խոսքը նշանակություն կունենա, քանի որ համոզված են, որ «ինչ ուզեն՝ դա էլ անելու են»: «Մեզ միայն ընտրությունների ժամանակ են հիշում կամ գալիս գյուղ: Իրենք շատ լավ տեղյակ են մեր ջրի խնդրի մասին, մենք չէ որ պետք է ասենք՝ իրենք իմանան: Գյուղը գյուղատնտեսական կոոպերատիվ տեխնիկա է ստացել, բայց միայն դրանից օգտվում է գյուղապետը և ծառայում է միայն իրեն, ինչ քննարկումների գնալու մասին է խոսքը կամ մեր կարծիքը ով ա հաշվի առնում»,-ասում է հարցման մասնակիցներից մեկը:

Հարցվողները նաև դժգոհում են հանրային լսումների մասին ոչ պատշաճ իրազեկման մասին**:** «Երբեք չեմ մասնակցել համայնքապետարանում կազմակերպված քննարկման, բայց շատ կցանկանամ մասնակցել, ուղղակի երբեք չեմ իմացել, թե երբ են լինում քննարկումները: Բնունիս գյուղում շատ ու շատ անգամ միջոցառումներ են եղել, որոնց ժամանակ բազմիցս նշել եմ գյուղի մի շարք խնդիրների մասին, բայց ոչ մի բնակչի կարծիքը հաշվի չի առնվել: Խմելու ջրի հարցով բազմիցս դիմել եմ համայնքի ղեկավարին և միշտ ստացել եմ «դե կտեսնենք, ինչ ենք անում» պատասխանը»- ասում է հարցվողներից մեկը:

Հեռավոր որոշ բնակավայրերի հարցվողներ դժգոհում են, որ ոչ մեկը չի հիշում, որ իրենց գյուղերում մարդիկ են մասնակցում, չնայած բազմաթիվ խնդիրներ ունեն, բայց իրենց, միևնույն է, լսող չկա:

«Մեկ անգամ մասնակցել եմ ավագանու նիստի, և այդպես էլ ոչ մի որոշման չեկան ավագանու անդամները, մեկը մյուսին միայն քննադատում էր: Ծանոթ ունեմ, որը կին ավագանու անդամ էր, ասում էր ավագանու նիստից միայն երկու օր առաջ են ինձ իրազեկել նիստի մասին, ուր մնաց բնակիչները տեղեկացված լինեն, նույն էլ սուբվենցիոն ծրագրերի պարագայում է»,-ասում է հարցվողը:

Հարցվողների մի մասը նաև նշում է, որ ավագանու նիստի մասին տեղեկանում են ՏԻՄ-ի պաշտոնական էջից, բայց ուշ են տեղադրում հայտարարությունները: Լինում են դեպքեր, որ տնից օնլայն հետևում են ավագանու նիստին, իրազեկվածության մակարդակը շատ ցածր է, առաջարկում են, որ նիստերի և շատ հարցերի դեպքում ֆեյսբուքով տարածեին:

Հարցված 42 մարդկանցից 20-ը հայտնել է, որ ընդհանրապես տեղյակ չեն, թե ինչ է սուբվենցիոն ծրագիրը, և հանրային քննարկումներից տեղյակ չեն, և երբևէ առաջարկ չեն ներկայացրել համայնքի ղեկավարին:

Համայնքապետարանի աշխատակիցների պատասխանները ստորև՝

Ինչպե՞ս են համայնքի տարբեր բնակավայրերի բնակիչներին իրազեկում լսումներ, քննարկումներ անցկացնելու մասին:

Բաց լսումների, հանրային քննարկումների մասին հայտարարությունները տեղադրվում են Հայաստանի Հանրապետություն թերթում, Սիսիանի համայնքապետարանի պաշտոնական կայքում, տեսանելի վայրերում հայտարարություններ փակցնելու միջոցով:

Բնակիչներն ինչպե՞ս են արձագանքում հրավերին և ինչ խնդիրներ կան մասնակցայնությունն ապահովելու առումով:

Բնակչությունը մասնակցում է, բայց ոչ ակտիվ կերպով՝ հիմնականում խնդրով շահագրգիռ անձինք:

Որքանո՞վ են ավագանու կողմից «Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության» և «Հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման» կարգերը կիրառելի, ի՞նչ փոփոխություն կառաջարկեիք, ունե՞ք տարբերակներ:

Ավագանին ինքն է կազմակերպում և կիրառում գործող կարգերը: Նշված հարցի վերաբերյալ չունենք վերլուծություն, որպեսզի ներկայացնենք առաջարկություն կամ դիտողություն

Հանրային լսում կազմակերպելու մասին ինչպե՞ս եք իրազեկում բնակիչներին:
Հանրային լսումների մասին հայտարարությունները տեղադրվում են Հայաստանի Հանրապետություն թերթում, Սիսիանի համայնքապետարանի պաշտոնական կայքում, հայտարարությունները տեսանելի վայրերում փակցնելու միջոցով:
Բացի հանրային լսումներից, ինչ այլ գործիքներով է համայնքի բնակչությունն իրազեկվում զարգացման ծրագրերի մասին:
Բնակչությունը զարգացման ծրագրերի մասին հիմնականում իրազեկվում է հայտարարությունների միջոցով:

Ամփոփում
Սիսիան համայնքը, որում մի ամբողջ շրջան է միավորված, սուբվենցիոն ծրագրեր է իրականացնում առանց հանրային քննարկման: Համայնքի պաշտոնական կայքում հանրային լսում իրականացնելու վերաբերյալ հայտարարություն է տեղադրվել միայն 2020թ.-ի սուբվենցիոն ծրագիրը ներկայացնելու վերաբերյալ: Սիսիան համայնքի ֆեյսբուքյան էջում սուբվենցիոն ծրագրի վերաբերյալ հանրային լսում իրականացնելու հայտարարություն չեն հրապարակել:
Կայքի նորություններ բաժնում տեղեկացրել են, որ 2022թ.-ի սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ հանրային լսում են իրականացրել : Ընդ որում, ոչ թե քննարկում է տեղի ունեցել, այլ համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրել է 2022թ.-ին նախատեսված սուբվենցիոն ծրագրերը:
«Սույն թվականի փետրվարի 4-ին Սիսիանի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ) և 2022 թվականին նախատեսված սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ հանրային լսում, որին ներկա էին համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, ենթակա կազմակերպությունների աշխատակիցներ, համայնքի բնակիչներ, ինչպես նաև «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետ Կարեն Հովհաննիսյանը: Ողջույնի խոսքով հանդես եկավ համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Հովհաննիսյանը, ով ներկայացրեց 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը և նախատեսված սուբվենցիոն ծրագրերը»:
Հանրային լսում իրականացնելու վերաբերյալ արձանագրությունները չեն հրապարակվել, ծրագրի հայտերը կցված չեն ավագանու որոշմանը, հետևաբար բնակիչները կառավարություն ներկայացվող ծրագրերի ընտրության և հիմնավորվածության մասին տեղեկացված չեն:
Բնակիչների հետ արված հարցումները ցույց են տալիս, որ մեծամասնությունը դժգոհ է հանրային լսումների մասին չիրազեկելուց: Համայնքապետարանի պաշտոնական կայքում միայն 2020թ. սուբվենցիոն ծրագրի վերաբերյալ է հայտարարություն հրապարակվել, բայց ոչ ծրագրեր քննարկելու նպատակով, այլ իրենց ընտրած ծրագրերը ներկայացնելու համար: Հարցվածներն առաջարկել են, որպեսզի հանրային լսումների մասին իրազեկեն նաև ֆեյսբուքով:
Հարցվածների մեծ մասը հայտնել է, որ ներկայացված ծրագրերը առաջնահերթ չէին, կարևորել են գյուղերում խմելու ջրով ապահովելու հարցը, գազաֆիկացումը, որպեսզի առաջին հերթին մանկապարտեզներն ու դպրոցները ջեռուցման համակարգեր ունենան: Ափսոսանք են հայտնել, որ 2022թ.-ին Սիսիան համայնքի Վաղատին և Աղիտու բնակավայրերում խմելու ջրի ջրագծի վերանորոգում հայտը հաստատվել է, սակայն ծրագիրը չի կարող իրագործվել, որովհետև ավագանի չունեն՝ նորընտիր ավագանին հրաժարվել է մանդատներից:

Իհարկե, կան մարդիկ, որոնք հայտնել են, թե հետաքրքրված չեն քննարկումներով:
2022թ. սեպտեմբերին Գորայք համայնքը իր 4 բնակավայրերով միավորվեց Սիսիան համայնքի հետ, սակայն Սիսիանում տեղական իշխանություն չընտրվեց, հետևաբար անհնարին դարձավ Գորայքը որպես առանձին համայնք դիտարկելը, իսկ միավորումը փաստացի չիրականացավ:

Տաթև համայնքի սուբվենցիոն հայտերի ընդունման և հաստատման ընթացակարգի ուսումնասիրություն ըստ տարիների

Տաթև համայնքը խոշորացվել է 2016թ.-ին, նրա կազմում ընդգրկվել են 8 գյուղեր՝ Շինուհայր, Տաթև, Խոտ, Հարժիս, Հալիձոր, Սվարանց, Տանձատափ, Քաշունի:

2019թ.-ին Տաթև համայնքը մեկ ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 08 մայիսի 2019 թվականի N 20-Ա որոշումով[17]՝

Տաթև համայնքի Շինուհայր բնակավայրի նախադպրոցական հաստատության առաջին մասնաշենքի վերանորոգում:
Համայնքապետարանի տրամադրած արձանագրության համաձայն՝ 2019թ. մայիսի 7-ին Տաթևի համայնքապետարանում հանրային լսում է իրականացվել, օրակարգում միայն մեկ ծրագիր է ընդգրկվել, որն էլ ներկայացվել է Կառավարություն: Մասնակցել են 23 հոգի, նրանց ով լինելը նշված չէ:
Համայնքի պաշտոնական կայքում 2019թ. հանրային լսում իրականացնելու վերաբերյալ հայտարարություն չկա:

2020թ.-ին Տաթև համայնքը երեք ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 15 ապրիլի 2020 թվականի N 20-Ա որոշումով

Հավելվածը կցված չէ որոշմանը, հետևաբար, բնակիչները չեն կարող անգամ տեղեկանալ, թե ինչ հայտեր են ներկայացվել:

1) Տաթև համայնքի «Հարժիսի նախակրթարանի վերանորոգում»
2) Տաթև համայնքի «Խոտի նախակրթարանի վերանորոգում»
3) Տաթև համայնքի «Հալիձորի նախակրթարանի վերանորոգում»:

Հանրային լսում. 2020թ. ապրիլի 9-ին Տաթևի համայնքապետարանում հանրային լսում է իրականացվել՝ «սուբվենցիոն ծրագրի նպատակահարմարության վերաբերյալ», օրակարգում եղել են այն ծրագրերը, որոնք ներկայացվել են Կառավարություն: Մասնակցել են 19 հոգի, նրանց ով լինելը նշված չէ:
Համայնքի պաշտոնական կայքում 2019թ. հանրային լսում իրականացնելու վերաբերյալ հայտարարություն չկա: Արձանագրության մեջ նշված է, որ հանրային լսում իրականացնելու վերաբերյալ հայտարարությունը տարածվել է վարչական ղեկավարների միջոցով՝ ելնելով արտակարգ իրավիճակից:

2021 թ.-ին Տաթև համայնքը երկու ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 19 փետրվարի 2021 թվականի N 36-Ա որոշումով[18]

1) Տաթև համայնքի «Շինուհայրի նախակրթարանի մեկ մասնաշենքի վերանորոգում»
2) Տաթև համայնքի «Տաթևի նախակրթարանի վերանորոգում»:

[17] https://tatevhamaynq.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=6c696187-2f70-4d73-a213-[17]6f26ae48ebb2

[18] https://tatevhamaynq.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=4d62facf-e9ed-436b-b7bd-70ef19f76a11

Հայտերը կցված չեն որոշմանը: Համայնքապետարանը նաև հարցումով չի տրամադրել տեղեկատվություն:

2022թ.-ին Տաթև համայնքը հինգ ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 14 ապրիլի 2022 թվականի N 15-Ա որոշումով

Հայտերը կցված չեն ավագանու որոշմանը:

1) Տաթև համայնքի «Շինուհայր բնակավայրի երաժշտական դպրոցի վերանորոգում»
2) Տաթև համայնքի «Շինուհայրի նախակրթարանի մեկ մասնաշենքի վերանորոգում»
3) Տաթև համայնքի «Տաթևի նախակրթարանի վերանորոգում»,
4) Տաթև համայնքի «Շինուհայր, Տաթև, Խոտ, Հալիձոր բնակավայրերի նախադպրոցական ուսումնական հաստատությունների, Շինուհայր բնակավայրի երաժշտական դպրոցի շենքի տանիքներին և Հ-46 հանրապետական ու միջհամայնքային նշանակության ավտոճանապարհի գիշերային լուսավորության ցանցի էներգիայի սնուցման նպատակով արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում»,
5) Տաթև համայնքի «Վարչական տարածքով անցնող Հ-46 հանրապետական և միջհամայնքային նշանակությամբ ավտոճանապարհի երկայնքով գիշերային լուսավորության ցանցի կառուցում»:

Հանրային լսում. 2022թ. հունվարի 26-ին Տաթևի համայնքապետարանում հանրային լսում է իրականացվել՝ «սուբվենցիոն ծրագրի նպատակահարմարության վերաբերյալ», օրակարգում եղել են այն ծրագրերը, որոնք ներկայացվել են Կառավարություն: Քննարկումը վարել է համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանը: Մասնակցել են 17 հոգի՝ Տաթև, Շինուհայր, Խոտ բնակավայրերից, նրանց ով լինելը նշված չէ: Արձանագրության մեջ նշված է, որ հանրային լսում իրականացնելու վերաբերյալ հայտարարությունը տեղադրվել է համայնքի պաշտոնական կայքում, իրազեկել են նաև վարչական ղեկավարների միջոցով: Հարցուպատասխանի ժամանակ նիստը վարողները պատասխանեցին **համայնքաբնակների կողմից բարձրացված հարցերին, որոնք հիմնականում վերաբերվում էին ծրագրի նախահաշվին և ծրագրի իրականացման բյուջեին:**

Ֆեյսբուք սոցիալական ցանցում տեղեկատվություն է հրապարակվել իրականացված հանրային քննարկման վերաբերյալ, իսկ քննարկում իրականացնելու մասին հայտարարություն չէին տեղադրել: Այսինքն, հետին թվով բնակիչներին տեղեկացրել են ընտրված սուբվենցիոն ծրագրերի մասին: «Տաթևի համայնքապետարանի նիստերի դահլիճում [19]
կազմակերպվել էր հանրային լսում, որին մասնակցում էին վարչական ղեկավարներ, համայնքապետարանի աշխատակիցներ, բնակավայրերի ներկայացուցիչներ: Հանդիպման գլխավոր թեման առնչվում էր սուբվենցիոն ծրագրերին: Ներկաները գնահատելով իրենց բնակավայրերի կարիքները և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները հանդես եկան առաջարկներով: Քննարկումից հետո ընտրվեց 4 սուբվենցիոն հայտ, որոնք կիրականացվեն 4 բնակավայրերում: Առաջնահերթությունը տրվեց Շինուհայրի երաժշտական դպրոցի և մանկապարտեզի 3-րդ մասնաշենքի վերանորոգմանը, Տաթևի մանկապարտեզի, Հալիձորի ոռոգման ցանցի վերանորոգմանն ու Հարժիսի կոյուղագծի կառուցմանը ...»:

---

19 https://www.facebook.com/TatevMunicipality/posts/pfbid0KxNAs3yKxbKEDULjoRnhyiWKmmHoJLSGBKTqGnnUf7v5cB6p77J97XX1w6jTECwDl

Տարեկան աշխատանքային պլանները կայքէջում տեղադրված չեն. մեր հարցման ընթացքում ուղարկել է միայն 2022թ.-ի աշխատանքային պլանը:
2019թ.-ի աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ որևէ որոշում չկա կայքէջում: 2019թ.-ի դեկտեմբերի 18-ին հաստատվել է 2020թ.-ի տարեկան աշխատանքային պլանը, բայց աշխատանքային պլանը կցված չէ: 2020թ.-ի դեկտեմբերի 22-ին հաստատվել է 2021թ.-ի տարեկան աշխատանքային պլանը, բայց աշխատանքային պլանը կցված չէ:
Կայքէջում նույնիսկ հրապարակված չէ Տաթև համայնքի 2016-2021թթ. հնգամյա զարգացման պլանը: Տաթև համայնքի 2022-2026թթ. հնգամյա զարգացման պլանում ներկայացված 18 զարգացման ծրագրերից 7-ը ներկայացված էր 2022 թ.-ի ՏԱՊ-ով: Սուբվենցիոն ծրագրերը համապատասխանում էին ՏԱՊ-ով ներկայացված ծրագրերին, բայց ոչ բոլորն են իրականացվել. որոշ ծրագրեր ընդգրկվել են 2023թ.-ի սուբվենցիոն հայտերում:
Վերոնշյալ սուբվենցիոն բոլոր հայտերը հաստատել է Սյունիքի մարզպետարանը, սակայն 2021թ. Տաթև համայնքի «Տաթևի նախակրթարանի վերանորոգում» ծրագիրը չի իրականացվել: Ծրագիրը դադարեցրել է Տաթև համայնքի ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Մաթևոսյանը: Համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Գերասիմյանը հայտնեց, որ բոլոր փաստաթղթերը կային, կառավարությունը հաստատել էր ծրագիրը, պետք էր զուտ շինարարական տենդերը հայտարարել, բայց չիրականացրին:
2019-2022թթ. Տաթև համայնքում սուբվենցիոն ծրագրեր են իրականացվել Շինուհայր, Հարժիս, Խոտ, Հալիձոր, հետևյալ բնակավայրերում: Համայնքային կենտրոն Շինուհայրում երեք ծրագրային հայտ է ներկայացվել:

Հարցազրույցներ թիրախ խմբերի հետ.

Տաթև համայնքի ղեկավարի տեղակալ Մարատ Գերասիմյան

Հանրային քննարկման մասին հայտարարությունները տարածվում են կայքով, սոցիալական հարթակներով, բայց շատ քիչ մասնակցայնություն են ապահովում: Ներկաների հետ քննարկվում է այն՝ ինչ նախատեսվում է անել, լսում ենք բնակիչների կարծիքը ու ընդհանուր հայտարարի ենք գալիս: Բոլոր բնակավայրերում լինում են հանրային լսումներ: Լսումների ժամանակ քննարկվում են ծրագրերը, որի համար հաշվի ենք առնում ենթակառուցվածքների առկայությունը, վիճակը: Դիտարկում ենք նաև նախատեսվող բյուջեն ու փորձում կատարվող ներդրումները հավասարապես բաշխել:

Այս ամենը հաշվի առնելով կարևորում ենք տվյալ բնակավայրի առաջնահերթ կարիքը. օրինակ, Հալիձորում առաջարկել ենք կոյուղի կառուցել, որին բնակիչները դեմ չէին: Նրանք առաջարկում էին նաև գազիֆիկացնել գյուղը, հաշվարկներ ենք կատարել, թե ինչ կարժենա Հալիձոր բնակավայրի գազաֆիկացումը: Մասնագետների հետ քննարկման արդյունքում հասկացանք՝ որպեսզի Հալիձորը գազ ունենա, պետք է նախ մինչև Շինուհայր հասնող գազի խողովակի տրամաչափը փոխել: Սակայն ծախսը մեծ էր, մենք չէինք կարող իրականացնել, բնակիչներին առաջարկել ենք ոռոգման ջրի հարցը լուծել: Քանի որ այն պակաս կարևոր չէ, բնակիչներն էլ համաձայնել են և 2023թ. սուբվենցիոն ծրագրերում ոռոգման ջրի հարցը հաստատ կլուծվի: Բացի մեր առաջարկներից, նաև մարդկանց կարծիքներն ենք հաշվի առնում: Օրինակ, քննարկումների ժամանակ բնակիչների հնչեցրած գաղափարներից ի հայտ է եկել նման ծրագիր, որով մենք պետք է ունենանք ավտոաշտարակ, քանի որ մենք համայնքում ունենք 800-ից ավելի գիշերային լուսավորության լուսատու, ևս 600-ը այս տարվա ծրագրով կտեղադրվի, 500-ի մոտ էլ մյուս տարի: Այսպիսով, լուսավորության ցանցի սպասարկման համար պետք է ունենանք համապատասխան տեխնիկական միջոցներ: 2023թ.-ի սուբվենցիոն ծրագրերից մեկը հենց ավտոաշտարակի ձեռքբերումն է:

Ֆոտովոլտային կայանների տեղադրման ծրագիրն իմ առաջարկով է եղել, քանի որ միայն 2022թ.-ի սուբվենցիոն ծրագրով 280 կվ հզորությամբ ֆոտովոլտային կայան է տեղադրվել, որը տարեկան 378 հազար կվտ հոսանք է արտադրում, որը մոտ 18 մլն 900 հազար գումար է: Դա էլ նշանակում է բյուջեի միջոցների խնայողություն. « Եթե մենք տարեկան գոնե 10 միլիոն դրամ խնայողություն ունենանք էլեկտրականության հաշվին, հաջորդ տարի կարող ենք 1-2 ծրագրի համաներդրում ապահովել:

Եթե մի հարց բնակչության քննարկմանն է դրվում 100% բնակիչները համակարծիք չեն լինում, իսկ այդ դեպքում եթե անհատական բոլորի կարծիքը լսենք, ոչ մի ծրագիր իրականություն չի դառնա: Դրա համար փորձում ենք բնակիչների մեծամասնության տեսակետը հաշվի առնել, որովհետև երբեմն բնակիչներն ավելի շատ անձնական շահն են առաջ քաշում, քան հանրայինը:

Ուզում ենք համայնքում ակտիվացնենք մասնակցայնությունը. դա լինի հանրային լսում, թե որևէ համատեղ արվող աշխատանք: Գրաֆիկ ենք ստեղծել ու հանդիպումներ ենք ունենալու բնակիչների, մասնավորապես երիտասարդների հետ՝ նրանց ներգրավելու համայնքի կառավարմանը, հանրային լսումների մասնակցության ապահովմանը, ծրագրերի իրականացմանը: Սկզբում բնակավայր-բնակավայր կիրականացնենք որոշ նախաձեռնություններ, հետո արդեն կփորձենք բոլոր բնակավայրերին միավորել ու համատեղ ինչ-որ նախաձեռնություններ իրականացնել:

Հարցումներն իրականացվել են Տաթև համայնքի Շինուհայր, Հալիձոր և Հարժիս գյուղերում: Հարցված բնակիչների մի մասը տեղյակ էր սուբվենցիոն ծրագրերից և հանրային քննարկումների մասին տեղեկացված էր համայնքապետարանի պաշտոնական կայքից:

Մասնակցել էին քննարկմանը, առաջարկներ էին ներկայացրել, մի քանիսը հայտնել են, որ կթանկանային տեղեկացված լինել և կմասնակցեին քննարկմանը, որովհետև առաջարկներ ունեն: Համայնքապետարանում վերջին անգամ մասնակցել եմ մի քննարկման, որի ժամանակ փորձում էին որոշել, թե ճիշտ կլինի գյուղում կառուցել խաղահրապարակ կամ ճանապարհի վրա կառուցել մի կետ, որտեղ մարդիկ կկարողանան հեշտ իրացնել իրենց գյուղմթերքը: Քննարկման մասին տեղեկացել եմ համայնքապետարանի էջից, վարչական ղեկավարից: Հիմնականում մասնակցել են և գոհ են, որ իրենց առաջարկները չեն անտեսվել:

Ամփոփում

Փաստաթղթերի ուսումնասիրությունը և հարցումներին տրված պատասխաններն էականորեն հակասում են իրար: www.tatevhamaynq.am կայքէջի հայտարարություններ բաժնում որևէ հայտարարություն չկա սուբվենցիոն ծրագրերի համար հանրային քննարկում հրավիրելու վերաբերյալ: Մինչդեռ, բնակիչներից ոմանք հայտնել են, որ համայնքապետարանի պաշտոնական կայքից են տեղեկացել այդ մասին: Հավաստի չէ նաև Տաթև համայնքի ղեկավարի այն միտքը, որ բոլոր բնակավայրերում լինում են հանրային լսումներ: Նա նաև հայտնել է, որ ներկաների հետ քննարկվում է այն՝ ինչ նախատեսվում է անել, լսում ենք բնակիչների կարծիքը ու ընդհանուր հայտարարի ենք գալիս: Այսինքն, այս համայնքում նույնպես ծրագրերի ընտրությունը կատարվում է համայնքապետարանի աշխատակազմում, ոչ թե բնակիչների հետ հանդիպումների ժամանակ:

Մեր ուղարկած հարցման արդյունքում տրամադրել են 2019, 2020 և 2022 թթ.-ի հանրային լսումների արձանագրությունները: 2021թ. արձանագրությունը բացակայում է: Արձանագրություններում ոչինչ նշված չէ մասնակիցների կողմից արված առաջարկությունների կամ բարձրացրած հարցերի վերաբերյալ: 2019 և 2020 թթ.-ի արձանագրություններում տեղեկություն չկա, թե որ բնակավայրերից են մասնակիցները:

Տաթև համայնքի կայքէջում՝ www.tatevhamaynq.am, տեղադրված են ամեն տարի ավագանու կողմից հաստատված որոշումները, ըստ որի սուբվենցիա ստանալու նպատակով ներկայացվելիք հայտերին համաձայնություն է տրվել, սակայն հայտերը կցված չեն: Արձանագրությունները նույնպես չեն հրապարակվել, ինչպես նաև տարեկան աշխատանքային պլանները և հնգամյա զարգացման ծրագրերը:

Տեղ համայնքի սուբվենցիոն հայտերի ընդունման և հաստատման ընթացակարգի ուսումնասիրություն ըստ տարիների

Տեղ համայնքը խոշորացվել է 2016թ.-ին, նրա կազմում ընդգրկվել է 7 գյուղ:

Տեղի համայնքապետարանը 2019 և 2020թթ.-ին սուբվենցիոն ծրագիր չի ներկայացրել:

2021թ.-ին Տեղ համայնքը երկու ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 23 ապրիլի 2021 թվականի N 16-Ա որոշումով[20]

1/ «Տեղ համայնքի Խոզնավար բնակավայրի ոռոգման ներքին ցանցի կառուցում»,

2/ «Տեղ համայնքի Խնածախ բնակավայրի ոռոգման ներքին ցանցի վերանորոգում»

Սուբվենցիոն հայտը կցված է ավագանու որոշմանը.

Հանրային լսում. 2020թ. դեկտեմբերի 29-ին Տեղի համայնքապետարանի նիստերի դահլիճում հրավիրվել է համայնքի սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրի հանրային քննարկում: Քննարկմանը

[20] http://tegh.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=74ab40f8-ee62-4711-825a-57f1b6fe0963

մասնակցել են համայնքապետարանի աշխատակիցներ, ավագանու անդամներ, վարչական ղեկավարներ, բնակիչներ, ընդհանուր 28 մասնակիցներից 6-ն են եղել համայնքի բնակիչներ: Տեղի համայնքապետարանը մեր ուղարկած հարցման հիման վրա տրամադրել է հանրային լսման արդյունքները, որից պարզ չէ, թե բնակիչներն առաջարկներ ներկայացրե՞լ են և նրանց ներկայացրած առաջարկություններն ու բարձրացված հարցերը տեղ գտե՞լ են ծրագրերում: Միայն նշված է, որ բնակիչները ողջունեցին համայնքում նախատեսվող ծրագրերը:
Հանրային քննարկման մասին համայնքային կայքում հայտարարություն չի տեղադրվել:
2022թ.-ին Տեղ համայնքը մեկ ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 18 մայիսի 2022թ. N 30-Ա որոշումով[21] «Տեղ համայնքի խաղահրապարակ-ժամանցի կենտրոնի վերակառուցում, վերանորոգում»
Սուբվենցիոն հայտը կցված է ավագանու որոշմանը:
Հանրային լսում. Տեղի համայնքապետարանը հանրային քննարկման վերաբերյալ կազմված արձանագրությունը չի տրամադրել: Հանրային բաց լսում իրականացնելու վերաբերյալ: Կայքի հայտարարություններ բաժնում հայտարարություն տեղադրվել է, 2022 թվ.-ի հունվարի 19-ին կայանալիք հանրային լսման վերաբերյալ [22]
Հայտարարությունը հրապարակվել է նաև համայնքի Ֆեյսբուքի էջում, ստորև 2022 թ.-ի հղումները[23].
«2022 թ. հունվարի 19-ին, ժամը 11:00-ին, Տեղի համայնքապետարանի նիստերի դահլիճում կկայանա հանրային բաց լսումներ՝ համայնքի 2022 թվականի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրային հայտերի վերաբերյալ: Հանրային լսումները հնարավորություն են տալիս առավել թափանցիկ ու բնակչության համար հասանելի և վերահսկելի դարձնել համայնքապետարանի գործունեությունը: Համայնքում իրականացվող գործընթացներին իրազեկ լինելու համար ակտիվորեն մասնակցեք տեղական ինքնակառավարմանը[24]:
Տեղ համայնքը 2021թ.-ին սուբվենցիոն միայն մեկ ծրագիր է իրականացրել, որը ներկայացված է նույն տարվա ՏԱՊ-ով: 2022 թ.-ին ներկայացված սուբվենցիոն ծրագիրը համապատասխանում է նույն տարվա ՏԱՊ-ով պլանավորված աշխատանքներին:
Տեղ համայնքի ղեկավար **Դավիթ Ղուլունցի** կարծիքով այս ժամանակներում բնակչության շրջանում համատարած անտարբերություն կա ՏԻՄ-ի աշխատանքների նակատմամբ, որովհետև մարդիկ մտահոգ են. «Առաջնահերթն անվտանգության հարցն է, որը կապված է մեծ գումարների հետ, այդ խնդիրը սուբվենցիայով չի լուծվի, դրանից դուրս, մնացած հարցերի նկատմամբ հանրությունը պակաս հետաքրքրություն է ցուցաբերում»-ասում է համայնքի ղեկավարը:
Ավագանու անդամ Նազիկ Բաղդասարյան. «Շատ դեպքերում իշխանությունները չեն կարողանում արդարացնել բնակիչների սպասելիքները, որովհետև բավարար ներդրում չեն կարողանում ապահովել առավել մեծ պահանջարկ ունեցող խնդրի լուծման համար» Նա նշել

[21] http://tegh.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=6b4c8b9f-f43a-40dc-88d4-5f59582639af
[22] http://tegh.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=61#.YyeGsnZBxPY
[23] https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid035Z1tHdqyqUUXJQiZBiZqLfqxr6ZNUeqwmCE5MDaFvYU5V8Dzu12ChyRqg496J6YFl&id=1812692675426732
[24] https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0SRwSL2WGd4vkho9AK2obF95z2UPstS4fpDE2VU7CQsiqBCX4jk6uh7mRt8Zzeq6ml&id=1812692675426732

է, որ այլընտրանքային ռեսուրսներ են փորձում գտնել, որպեսզի կարողանան ներդրում կատարել, բայց ըստ նրա, բնակիչների հետ երկարատև աշխատելու խնդիր ևս կա:
Տեղ համայնքի ղեկավարի տեղակալ **Արամ Միրզոյանը** հարցազրույցի ժամանակ նշում է, որ համայնքի բնակիչների տեղեկացնում ենք պաշտոնական կայքի միջոցով: Նա նշել է, որ բնակիչների մասնակցայնության ապահովման խնդիրը դեռևս առկա է: Ըստ նրա, դա կապված է նաև բնակավայրերի միջև վատ հաղորդակցության հետ, ներհամայնքային տրանսպորտ չի աշխատում, առցանց կազմակերպելու դեպքում էլ երիտասարդները կարող են միայն օգտվել համացանցից: Փոխհամայնքապետը կարևորում է այն փաստը, որ «իրենց իշխանությունը պարբերաբար լինում ե բնակավայրերում և այդ եղանակով հավաքագրում մարդկանց կարծիքով առավել կարևոր խնդիրները»:
Արավուսի վարչական նստավայրի աշխատակցի խոսքով իրենք բնակավայրում բնակիչներին հանրային լսումների մասին տեղեկացնում են հեռախոսազանգերով, բայց մարդիկ անտարբեր են, տրանսպորտային միջոցների բացակայության հետ նաև մարդիկ զբաղված են գյուղատնտեսական աշխատանքներով, չեն ցանկանում կտրվել դրանից և համայնքի կենտրոն գնալ: Նրա կարծիքով համայնքային իշխանությունները պետք է պարբերաբար գյուղերում լինեն:
Հարցումներին մասնակցած բնակիչների գերակշիռ մասը նշում է, որ հանրային լսումները ձևական բնույթ են կրում, իշխանությունները մարդկանց աչքերին» թոզ են փչում»: Նվեր Դալլաքյանն ասում է, որ ինքը երբեք չի հետևում ՏԻՄ-ի կայքին, որովհետև տանն ինտերնետ չունի, բայց եթե ինչ-որ ձևով տեղեկացնեն, կարող է մասնակցի, որովհետև ըստ նրա «դա կարող է առիթ լինել, որ գյուղի այլ մարդկանց հանդիպես մի ուրիշ հարցերի մասին խոսես»:

Ամփոփում
Տեղի համայնքապետարանը 2021թ. և 2022թ.-ին է սուբվենցիոն հայտեր ներկայացրել: Տեղի համայնքային կայքում հանրային լսումների վերաբերյալ հայտարարություններ կան հրապարակված, սակայն դրանցից միայն մեկն է վերաբերում սուբվենցիոն ծրագրերին: 2022թ.-ին և՛ կայքում, և՛ ֆեյսբուքի էջում հայտարարություն են հրապարակել հանրային քննարկում հրավիրելու մասին: Ավագանու հաստատած որոշումներին սուբվենցիոն հայտը կցված է:
Համայնքային կայքում հայտարարություն է տեղադրվել և «շահագրգիռ անձանց առաջարկել են Տեղի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված նախագծի վերաբերյալ առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել համայնքապետարանի էլ. հասցեով՝ tegh101@mail.ru կամ գրավոր ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ: Հանրային քննարկումը տեղի կունենա 2022թ. փետրվարի 25-ին, ժամը 14:30-ին Տեղի համայնքապետարանի նիստերի դահլիճում:
Նույն առաջարկը կարող էին բնակիչներին անել սուբվենցիոն ծրագրերի ժամանակ, առնվազն էլեկտրոնային եղանակով հիմնախնդիրները հավաքագրել, սակայն չի արվել: Տեղի համայնքապետարանը 2022թ.-ի հանրային քննարկման վերաբերյալ կազմված արձանագրությունը չի տրամադրել, հետևապես, չենք կարող ասել, թե քանիսն են մասնակցել և ինչ է քննարկվել:

Մեղրի համայնքի սուբվենցիոն հայտերի ընդունման և հաստատման ընթացակարգի ուսումնասիրություն ըստ տարիների
Մեղրի համայնքը խոշորացվել է 2016թ.-ին, նրա կազմում ընդգրկվել են Մեղրի քաղաքը ր 14 գյուղ:

2019թ.-ին Մեղրի համայնքը հինգ ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 07 մայիսի 2019 թ. N 36-Ա որոշումով[25]

1) Մեղրի համայնքի Ագարակի գոյություն ունեցող ջրավազանի վերանորոգման և բարեկարգման, Վահրավարի գոյություն ունեցող ջրավազանի վերանորոգման,Կարճևան, Լեհվազ և Նռնաձոր գյուղերի նոր ջրավազանների կառուցման աշխատանքներ:

2) Ավտոկայանատեղիների և հարակից շուկաների ասֆալտապատում Մեղրիի մաքսակետին կից և Մ-2 միջպետական ճանապարհի հարևանությամբ և դրանց հարող տարածքների բարեկարգում:

3) Զբոսայգու հիմնում Մեղրի քաղաքում,

4) Մեղրի քաղաքի մանկապարտեզի հիմնանորոգում,

5) Մեղրի համայնքի Շվանիձոր և Կարճևան գյուղերում մանկապարտեզի և բուժկետի համար հատկացված շինությունների վերահատակագծում և վերանորոգում:

Հանրային լսում. Համայնքապետարանի պաշտոնական կայքում հայտարարություն է տեղադրվել. «Մեղրի համայնքի հարգելի բնակիչներ, ս/թ մարտի 21-ին, ժամը 16:00-ին, Մեղրիի համայնքապետարանի նիստերի դահլիճում կկայանա հանրային քննարկում 2019 թվականի պետական բյուջեից սուբվենցիաներ /նպատակային հատկացում/ ստանալու նպատակով նախատեսված ծրագրերի շուրջ: Նախատեսվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնել հետևյալ ծրագրային առաջարկները**...»**

2020թ.-ին Մեղրի համայնքը հինգ ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 07 մայիսի 2020թ. N 31-Ա որոշումով Ագարակ քաղաքի նախկին կաթսայատան շենքի վերակառուցում մարզադպրոցի,

1) Մեղրի համայնքի Շվանիձոր գյուղում մանկապարտեզի և բուժկետի համար հատկացված շինության վերահատակագծում և վերանորոգում, Լեհվազ գյուղի մանկապարտեզի հիմնանորոգում,

2) Ագարակ քաղաքի Աբովյան փողոցի՝ 981մ երկարությամբ հատվածի հիմնանորոգում, մայթերի բարեկարգում, կանաչապատում:

2021թ.-ին Մեղրի համայնքը չորս ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 14 մայիսի 2021թ. N 41-Ա որոշումով

1) Մեղրի, Շվանիձոր, Լեհվազ բնակավայրերի մանկապարտեզների և Ագարակ բնակավայրի մարզադպրոցի համար գույքի ձեռքբերում

2) Մեղրի քաղաքի բազմահարկ շենքերի վերելակների արդիականացում

3) Խաղահրապարակի հիմնում և կասկադի կապիտալ վերանորոգում Մեղրի քաղաքում

4) Ճանապարհային ենթակառուցվածքների բարեկարգում Ագարակ քաղաքում:

2022թ.-ին Մեղրի համայնքը մեկ ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 07 մարտի 2022թ. N 18-Ա որոշումով

Մեղրի համայնքի Վանք-Կալեր գյուղեր տանող ճանապարհի հին կամրջի վերանորոգում:

Ավագանու որոշմանը կից հրապարակվել են սուբվենցիայի համար ներկայացվող հայտերի հիմնավորումները:

2022թ.-ին մեկ սուբվենցիոն ծրագիր է ներկայացվել պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու համար՝ նախատեսվում է վերակառուցել համայնքի Վարդանիձոր բնակավայրի

[25] https://www.meghri.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=870b1bde-a79a-411b-b263-57e092f47500

տարածքում գտնվող Վանք-Կալեր կամուրջը: Ծրագրի արժեքը 51 700 հազար դրամ է, որի համար համայնքային բյուջեի ներդրումը կկազմի 25 մլն դրամ:
Ծրագրային հայտի հիմնավորման մեջ նշվում է, որ այն Մեղրի համայնքի մյուս բնակավայրերին և Մ2 միջպետական ճանապարհին է կապում գյուղատնտեսական նշանակության զգալի հողատարածքներ: Նշված կամուրջը կառուցվել է 1970–ական թվականներին և մինչ այժմ երբևէ չի վերանորոգվել: Այն գտնվում է կիսաքանդ վիճակում, կանգնած է փլուզման վտանգի առաջ, ինչը լուրջ դժվարություններ է առաջացնում Վարդանիձոր գյուղի Վանք-Կալերի տարածքում գործունեություն ծավալող ֆերմերների համար:
Մեղրիի համայնքապետի խորհրդականի խոսքով հանրային լսումներ կազմակերպվում են հիմնականում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննությունների մասին: Նրա կարծիքով համայնքային իշխանությունն առավել տեղեկացված է համայնքային խնդիրներին և ըստ նրա, «ճիշտ ընտրություն» է կատարում: «Տարբեր բնակավայրերի բնակիչներ հավաքական մտածողություն չունեն, նրանցից յուրաքանչյուրը մատնանշում է իր գյուղի խնդիրը, հիմնականում այն փողոցի բարեկարգումը, որտեղ ի բնակարանն է»,-ասում է նա:
Ավագանու անդամ **Խաչատուր Անդրեասյանի** կարծիքով, ով ներկայացնում է Ազատական կուսակցությունը, բացի բնակավայրերից, նաև ավագանու անդամներն են «կարևոր դեր կատարում» սուբվենցիոն ծրագրերի համար, քանի որ առավել մեծ ներկայացուցչություն ունեցող քաղաքական կուսակցությունն այդ ձևով նաև ընտրազանգված է «հավաքում»:
Բնակչության շրջանում հարցումների ընթացքում ոմանք նշեցին, որ սուբվենցիոն ծրագրերի մասին խոսակցությունը առաջնահերթություն չէ: Այդ ժամանակաընթացքում հանրային դիսկուրսի թեման Մեղրիի միջանցքն էր, և Նռնաձորում կարծիք էին հայտնում, որ իրականացվող բոլոր ծրագրերը պետք է ուղղված լինեն անվտանգության ապահովմանը:
Մեղրիի քոլեջում անցկացված հարցման ութ մասնակցից միայն մեկն էր լսել սուբվենցիա բառն առհասարակ:
Առաջարկություն է եղել, որ համայնքային իշխանությունը պետք է հարթակ ունենա, որտեղ նաև ուսուցողական նյութեր լինեն, օրինակ, թե ինչ է սուբվենցիոն ծրագիրը, մասնակցայնությունը և այլն: Ոմանց կարծիքով բնակչության անհիրազեկվածությունը իշխանություններին «ձեռ է տալիս»:

Ամփոփում
Մեղրի համայնքի կայքէջում միայն 2019թ.-ին է սուբվենցիոն ծրագրեր ներկայացնելու վերաբերյալ հանրային լսում իրականացնելու հայտարարություն հրապարակվել: 2021թ.-ին Մեղրիում համայնքի նոր ղեկավար է ընտրվել՝ Բագրատ Զաքարյանը, որը 2021թ.և 2022թ.-ին ոչ մի հայտարարություն չի հրապարակել: Չի պատասխանել Գորիսի մամուլի ակումբի 20.09.2022թ.-ի N 98 գրությանը, որով խնդրել էինք տրամադրել հանրային քննարկումներ իրականացնելու վերաբերյալ արձանագրությունները և այլ տեղեկատվություն:

Քաջարանի համայնքի սուբվենցիոն հայտերի ընդունման և հաստատման ընթացակարգի ուսումնասիրություն ըստ տարիների
Քաջարան համայնքը խոշորացվել է 2016թ.-ին, Քաջարան քաղաքի հետ միավորվել է 18 գյուղ:
2019թ.-ին Քաջարան համայնքը հինգ ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 08 մայիսի 2019թ. N 18-Ա որոշումով:

1) Հասարակական շենքերի վերակառուցում/վերանորոգում,
2) Բակային սպորտի և մասսայական ֆիզկուլտուրային զարգացում,
3) Բնակավայրերի փողոցների հիմնանորոգում և բարեկարգում,
4) Բազմաբնակարան բազմահարկ շենքերի բարելավում և արդիականացում,
5) Համայնքի բնակավայրերում պուրակների և խաղահրապարակների վերակառուցում/կառուցում:
Սուբվենցիայի հայտերը կցված չեն ավագանու որոշմանը:
Հանրային լսում. «*Քաջարանի համայնքապետարանը տեղեկացնում է, որ մայիսի 6-ին՝ ժամը 15:00-ին, համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի կունենա համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված՝ 2019թ. իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի նպատակահարմարության վերաբերյալ հանրային լսում ...»:*
2020թ.-ին Քաջարան համայնքը չորս ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 27 ապրիլի 2020թ. N 23-Ա որոշումով:
1) Համայնքի բնակավայրերում պուրակների, մարզահրապարակների և խաղահրապարակների կառուցում/ վերակառուցում,
2) Համայնքի բնակավայրերի փողոցների հիմնանորոգում,
3) Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի էներգաարդյունավետության բարձրացում,
4) Խմելու ջրամատակարարման համակարգի վերակառուցում:
Սուբվենցիայի հայտերը կցված չեն ավագանու որոշմանը:
2021թ.-ին Քաջարան համայնքը երկու ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 27 մայիսի 2021թ. N 23-Ա որոշումով:
1) Համայնքի բնակավայրերի փողոցների և ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում/բարեկարգում
2) Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի էներգաարդյունավետության բարձրացում:
Սուբվենցիոն հայտերը կցված չեն որոշմանը:
2022թ.-ին Քաջարան համայնքը երեք ծրագիր է ներկայացրել պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով, որը հաստատվել է ավագանու 27 ապրիլի N 12-Ա որոշումով:
Խմելու ջրամատակարարման համակարգի կառուցում,
1) Մեքենասարքավորումների և տեխնիկայի ձեռք բերում,
2) Փողոցային լուսավորության համակարգի կառուցում գյուղական բնակավայրերում:
Սուբվենցիոն հայտերը կցված չեն որոշմանը:
Հանրային լսում. Կայքի «հանրային քննարկում» հայտարարություն է հրապարակվել, որ 2022թ. ապրիլի 25-ին Քաջարանի համայնքապետարանի նիստերի դահլիճում Քաջարան համայնքի 2022թ. տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերն իրականացնելու նպատակով հանրային լսում է իրականացվելու:
Քաջարանի համայնքապետարանից մեր հարցումներին պատասխանել են, որ հանրային լսումներ են իրականացրել և՛ Քաջարան քաղաքում, և՛ համայնքի բնակավայրերում: Մասնակցել են համայնքի բնակիչներ, Քաջարանի համայնքապետարանի աշխատակիցներ, ավագանու անդամներ: Ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ

եղել են, որից հետո կրկին քննարկումներ են իրականացվել, հաշվի են առնվել բոլոր հնչեցված տեսակետները:
Քաջարանում ՏԻՄ ընտրություններն անցկացվել են սեպտեմբերի 25-ին, և նախընտրական գործընթացում իշխանության ներկայացուցիչները հրաժարվում էին կարծիք արտահայտել:
Ավագանու անդամ **Արևիկ Հայրապետյանի** խոսքով տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների հետ կարողությունների զարգացման ծրագրերից բացի, անհրաժեշտ է բնակիչների համար ևս նախաձեռնություններ իրականացնել, քանի որ մասնակցային կառավարումը և դրա հետ կապված տարբեր գործիքները հանրության համար ոչ միայն կարևորված չեն, այլև անհասկանալի են:
Հարցվողներից ոմանք շեշտում էին Քաջարանի պղնձամոլիբդենային գործարանի առկայությունը, նշելով, որ սուբվենցիոն ծրագրերն իրենց չեն հետաքրքրում, որովհետև ըստ նրանց, համայնքում «հարց լուծողը կոմբինատն ա»:
Կարծիք է հնչել նաև այն մասին, որ համայնքը պետք է ունենա տեղական լրատվամիջոց, որը կկարողանա կապող օղակ լինել ՏԻՄ-ի և բնակչության միջև:

Ամփոփում
Քաջարան համայնքի պաշտոնական կայքում, ուսումնասիրված ժամանակահատվածում սուբվենցիոն ծրագրեր ներկայացնելու մասին հանրային լսում կազմակերպելու միայն մեկ հայտարարություն կա՝ 2019թ.-ին: Համայնքի ֆեյսբուքյան էջում նույնպես սուբվենցիոն ծրագրի վերաբերյալ հանրային լսում իրականացնելու հայտարարություն չի տեղադրվել:
Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմից հայտնել են, որ հանրային լսումներ են իրականացնում և՛ Քաջարան համայնքում, և՛ համայնքի բնակավայրերում: Մասնակցել են համայնքի բնակիչներ, Քաջարանի համայնքապետարանի աշխատակիցներ, ավագանու անդամներ: Առաջարկությունները և նկատողությունները տարբեր ծրագրերի վերաբերյալ եղել են և ըստ դրա նորից քննարկումներ են իրականացվել, հաշվի են առնվել բոլոր հնչեցված տեսակետները:
Սակայն, նրանց ասածը հավաստող տեղեկություններ չկան համայնքի պաշտոնական կայքում: Հակառակը, կայքի ուսումնասիրությունը պարզեց, որ ավագանու որոշումներին անգամ հայտերը չեն կցվում, որից բնակիչները կտեղեկանան ներկայացված ծրագրերի մասին: Հանրային քննարկման վերաբերյալ ոչ արձանագրություններն են հրապարակվել, ոչ էլ տեղեկատվություն կա այդ մասին:
Չեն հրապարակել նաև 2021 և 2022 թթ.տարեկան աշխատանքային պլանները, հետևաբար չենք կարող ասել, այդ տարիներին ֆինանսավորման ներկայացված սուբվենցիոն ծրագրերը ներառվա՞ծ էին ՏԱՊ-ում: Առհասարակ, հասկանալի չէ, թե ինչպես են ընտրվել և ինչպես է հիմնավորվել հաստատված ծրագրերի առաջնահերթությունը:
2019-2022 թվականների ընթացքում սուբվենցիոն ծրագրեր են իրականացվել Քաջարան համայնքի բոլոր բնակավայրերում (Գեղի, Նոր Աստղաբերդ, Անդոկավան, Ձագիկավան, Գետիշեն, Աջաբաջ, Ներքին Գիրաթաղ, Վերին Գիրքաթաղ, Լեռնաձոր, Քաջարանց, Բաբիկավան, Քաջարան քաղաք): Կան բնակավայրեր, որտեղ մի քանի ծրագիր է իրականցվել:

Եզրակացություն

«Զարգացման ծրագրերը՝ թափանցիկ, հրապարակային» ծրագրի աշխատանքային խումբն ուսումնասիրել է Սյունիքի մարզի Մեղրի, Կապան, Քաջարան, Սիսիան, Գորիս, Գորայք, Տաթև և Տեղ համայնքներում 2019-22թթ.-ին սուբվենցիոն ծրագրերի ընտրության գործում բնակչության մասնակցությունը:

Ընտրված մեթոդաբանությամբ ուսումնասիրությունն իրականացվել է փաստաթղթային մեթոդով և գրավոր հարցումներով, որոշ համայնքներում հարցումներ են իրականացվել նաև տեղական իշխանության ներկայացուցիչների և բնակիչների շրջանում:

Սյունիքի մարզի համայնքները խոշորացվել են 2016-17թթ.-ին, Կապան, Մեղրի և Սիսիան համայնքները խոշորացվել են շրջանային տարբերակով՝ համայնքային կենտրոն քաղաքների հետ միավորման մեջ ընդգրկվել են 30-ից ավելի գյուղական բնակավայրեր: Գորիս, Տաթև, Տեղ, Քաջարան համայնքները միավորվել են փնջային տարբերակով, որոնք ընդգրկում են նվազագույնը 7-ից մինչև 20 բնակավայր: Գորայք համայնքը 2022թ. սեպտեմբերին միավորվեց Սիսիանի հետ:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում հիշյալ համայնքներն ամեն տարի սուբվենցիոն հայտեր են ներկայացրել միջգերատեսչական հանձնաժողովին՝ պետական բյուջեից համաֆինանսավորում ստանալու համար: Բացառություն է Տեղ համայնքը, որը սուբվենցիոն ծրագիր է ներկայացրել միայն 2021 և 2022 թվականներին:

Սուբվենցիոն ծրագրերը, հիմնականում, իրականացվում են համայնքային կենտրոնում կամ համայնքային կենտրոնին մերձակա բնակավայրերում: Օրինակ, Գորիս համայնքում երկու բնակավայրեր՝ Վերիշենն ու Ակները, երեք տարի ընդգրկվել են սուբվենցիոն ծրագրերում, իսկ նույն համայնքից 5 այլ բնակավայրերի համար երբևէ սուբվենցիոն ծրագրեր չեն ներկայացվել:

Փաստաթղթային ուսումնասիրությունը պարզեց, որ սուբվենցիոն ծրագրերը կազմելուց առաջ համայնքապետարանները բնակավայրերում հանրային լսումներ չեն իրականացրել և կարիքների գնահատում չեն կատարել, որից հետո միայն հնարավոր կլիներ որոշել տարեկան սուբվենցիոն հայտերի առաջնահերթությունները:

Ուսումնասիրված 4 տարիներին հանրային լսումների վերաբերյալ հայտարարություններ են հրապարակվել մեկ-երկու անգամ: Ընդ որում, հայտարարությունները միայն սուբվենցիոն ծրագրերը ներկայացնելու օրակարգով չեն հրավիրվել: Նույն օրը միաժամանակ քննարկման է դրվել մի քանի կարևոր փաստաթուղթ՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, տարեկան աշխատանքային պլանը, սուբվենցիայի ծրագրերը և այլն: Մեկ ուրիշ անգամ՝ նախորդ տարվա բյուջեի կատարման հաշվետվությունը, տարեկան աշխատանքային պլանը և սուբվենցիայի ծրագրերը: Հազվադեպ է, որ անգամ համայնքային կենտրոնում հրավիրված հանրային լսումը լինի միայն սուբվենցիայի ծրագիր կազմելու համար:

Հանրային լսումների վերաբերյալ արձանագրությունները փաստում են.

1) քանի որ հնգամյա ռազմավարական պլանը, տարեկան աշխատանքային պլանը և սուբվենցիոն ծրագրերը միաժամանակ են ներկայացվում քննարկման, նշանակում է, որ այդ փաստաթղթերում ներառված համայնքային հիմնախնդիրներից ոչ մեկը բնակչության հետ ունեցած քննարկումների արդյունքում չի բացահայտվել: Հատկապես, երբ ըստ արձանագրությունների, հանրային քննարկման մասնակիցները եղել են՝ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարները, ավագանու անդամները, համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավարները և աշխատակիցներ, և մի քանի բնակիչ:

2) Քննարկման մասնակիցներին ոչ թե առաջարկվել է ներկայացնել համայնքային խնդիրները, որից հետո դրանք դասակարգել և քվեարկել ըստ առաջնահերթության, այլ

ներկայացվել են այն ծրագրերը, որոնք արդեն որոշվել էր ներկայացնել հանձնաժողովին՝ սուբսիդիայի ֆինանսավորում ստանալու համար:

- Այսինքն, հանրային քննարկումը նրա համար չէ, որ բնակիչները ներկայացնեն բնակավայրերի հիմնախնդիրները կամ գոնե քվեարկեն առաջարկվող ծրագրերի առաջնահերթության համար:

3) Մի քանի բնակավայրի համար նման ծավալուն ծրագրերը 15-ից մինչ 37 հոգով քննարկելը հանրային անվանելը ճիշտ չէ, ավելի ճիշտ է այն անվանել աշխատանքային ժողով: Համաձայն արձանագրության՝ մասնակիցները եղել են՝ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարները, ավագանու անդամները, համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավարները և աշխատակիցներ, և մի քանի բնակիչ:

4) Քանի որ ներկայացված արձանագրությունները կազմվել են միայն սուբվենցիայի ծրագրերի մասով, չնայած այդ օրն, ըստ արձանագրության, այլ փաստաթղթեր էլ են դրվել քննարկման, կնշանակի նպատակը լուրջ քննարկում կազմակերպելը չի եղել: Այն կազմվել է միայն միջգերատեսչական հանձնախմբին փաստաթղթերի ամբողջական փաթեթ ներկայացնելու համար, քանի որ արձանագրությունը փաթեթի կարևոր փաստաթղթերից մեկն է:

Կառավարության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիա տրամադրելու նպատակով ընդունած 2019թ. մարտի 19-ի 278-Ա «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» որոշման **12-րդ կետը վերաբերում է սուբվենցիայի ամբողջական փաթեթին:** Սուբվենցիայի հայտը ի թիվս այլ փաստաթղթերի, պետք է **ներառի նաև ծրագիրն իրականացնելու նպատակով կազմակերպված հանրային լսումների արձանագրությունը:**

2019 թ.-ի հունվարի 31-ի N 62-Ն որոշումով **Կառավարությունը** փոփոխություններ է կատարել 1708-Ն որոշման մեջ, մասնավորապես՝ սուբվենցիայի հայտերի ընդունելու կարգի մեջ: Որոշման 12-րդ կետով սահմանվել է այն փաստաթղթերի ցանկը, որը համայնքը պետք է ներկայացնի սուբվենցիայի հայտերը գնահատող միջգերատեսչական հանձնաժողովին: Ըստ այդմ՝ **սուբվենցիայի ամբողջական փաթեթը ներառում է՝**

1) սուբվենցիայի հայտը.

2) ծրագրի իրականացման նպատակահարմարության վերաբերյալ՝

- **Հայաստանի Հանրապետության համապատասխան համայնքի ավագանու որոշումը,**
- **Հայաստանի Հանրապետության համապատասխան համայնքի ղեկավարի գրությունը,**
- **Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի ուղեկցող գրությունը.**

3) ծրագիրն իրականացնելու նպատակով կազմակերպված հանրային լսումների արձանագրությունը.

Ներկայացված ծրագրերի առաջնահերթությունն, անշուշտ կփոխվեր, եթե յուրաքանչյուր բնակավայրի կարիքների գնահատում արվեր այդ բնակավայրերում հանրային քննարկումներ կազմակերպելով: Այնուհետև դրանք բոլորը միասին ներկայացվեր հանրային քննարկման՝ առաջնահերթությունը որոշելու համար: Մեր կարծիքով՝ այդ դեպքում, Կապան համայնքում 2022թ.-ին սուբսիդիայի համար ֆինանսավորման կներկայացվեին ոչ թե մի շարք բնակավայրերում վարչական շենքերի կառուցում և տարածքի բարեկարգում ծրագրային հայտերը, այլ՝ **սահմանամերձ մի քանի գյուղի խմելու ջրագծերի նորոգման և կառուցման աշխատանքները: Դրանց հրատապությունը զեկուցողը կարևորել է քննարկման ժամանակ և հայտնել է, որ հնարավոր է համայնքը լրացուցիչ դիմի**

մարզպետարանի միջնորդությանը՝ 2022թ. սուբվենցիայի ամբողջական փաթեթով ներկայացնելու համար:

Հավելյալ տեղեկացնենք, որ մարզպետարանի ներկայացուցիչն այդ հարցը վերջերս ներկայացնում էր ԱՄՆ ֆինանսավորմամբ նոր մեկնարկող ջրային ծրագրի ղեկավար կազմին:

Կարևոր է հասկանալ նաև, թե ի**նչո՞ւ բնակչությունը մասնակից չէ հանրային քննարկումներին:**

Համայնքապետարանների պաշտոնական կայքերում սուբվենցիոն հայտերի վերաբերյալ տեղեկատվությունը շատ սուղ է, հանրային քննարկում կազմակերպելու մասին հայտարարություններն անգամ կայքում միշտ չէ, որ տեղադրում են: Համայնքի ֆեյսբուքյան էջը, որը մեծ թվով հետևորդներ ունի, և տեղեկատվությունն արագ տարածելու լավագույն միջոցն է՝ չի ծառայեցվում բնակչության շրջանում լայն իրազեկում ապահովելուն և ծրագրերի թափանցիկ և հրապարակային ընտրությանը: Հազվադեպ են այստեղ հանրային քննարկման վերաբերյալ հայտարարություն տեղադրում:

Տարին մեկ անգամ համայնքային կենտրոնում հանրային քննարկում է հրավիրվում, որին մասնակից չեն գյուղերի բնակիչները: Հավաքի ժամանակ չի ներկայացվում այդ գյուղերում բացահայտված հիմնախնդիրները, այդ բնակավայրերից չունեն ավագանի, որը նախանձախնդիր կլիներ բնակավայրի շահը պաշտպանելու հարցում: Քննարկման մասնակիցներին պարզապես տեղեկացվում է, թե ինչ ծրագիր են ներկայացնելու այդ տարի, առաջարկների չեն սպասում, մասնակիցներին ընտրելու հնարավորություն չեն տալիս:

Համայնքապետարանի կայքում տեղադրված հայտարարությունների մասին բոլոր բնակիչները չէ, որ տեղյակ են: Հարցումները ցույց են տալիս, որ մարդիկ հետաքրքրված են, թե ինչ սուբվենցիոն ծրագրեր է պլանավորում իրականացնել համայնքապետարանը: Հարցվածների մեջ կան մարդիկ, որոնք քննարկումներին մասնակցելու ցանկություն ունեն, սակայն այդ մասին իրազեկված չեն: Չորսը տարիների հանրային քննարկման վերաբերյալ կազմված արձանագրությունների մեջ մասնակիցների հայտնած մտքերի, ինչպես նաև մասնակիցների թվաքանակի մասին տեղեկություններ չկան:

Կայքի «Հանրային քննարկում» հղումը հնարավորություն է տալիս նաև առցանց առաջարկներ ներկայացնել, նաև քվեարկել ծրագրերի առաջնահերթության համար, որն արդարությունը կպահպաներ: Սակայն, բնակիչներին նման առաջարկ չի արվել, նույնը հնարավոր է կազմակերպել համայնքի ֆեյսբուքյան էջով, սակայն այդ գործիքները չեն ծառայեցվում բնակչության շրջանում լայն իրազեկում ապահովելուն և ծրագրերի հրապարակային ընտրությանը:

Հանրային լսում իրականացնելու վերաբերյալ արձանագրությունները չեն հրապարակվել, ծրագրի հայտերը կցված չեն ավագանու որոշմանը, հետևաբար բնակիչները կառավարություն ներկայացվող ծրագրերի ընտրության և հիմնավորվածության մասին տեղեկացված չեն: Արձանագրությունները նույնպես չեն հրապարակվել, ինչպես նաև տարեկան աշխատանքային պլանները և հնգամյա զարգացման ծրագրերը: Սիսիան համայնքը, օրինակ, համայնքի պաշտոնական կայքում հանրային լսում իրականացնելու վերաբերյալ հայտարարություն է տեղադրել միայն 2020թ.-ի սուբվենցիոն ծրագիրը ներկայացնելու վերաբերյալ:

Հետևաբար, երբ համայնքապետարանը արձանագրություն է կազմում հանրային քննարկման վերաբերյալ, անհասկանալի է մնում՝ եթե բնակչությանը չեն իրազեկել այդ մասին, ում հետ են քննարկումն անցկացրել:

Առհասարակ, հասկանալի չէ, թե ինչպես են ընտրվել և ինչպես է հիմնավորվել հաստատված ծրագրերի առաջնահերթությունը: Բնակիչների հետ արված հարցումները ցույց են տալիս, որ

մեծամասնությունը դժգոհ է հանրային լսումների մասին չիրազեկելուց: Հարցվածներն առաջարկել են՝ հանրային լսումների մասին իրազեկել նաև ֆեյսբուքով:
Սիսիան համայնքում հարցվածների մեծ մասը հայտնել է, որ ներկայացված ծրագրերն առաջնահերթ չէին, կարևորել են գյուղերը խմելու ջրով ապահովելու հարցը, գազաֆիկացումը, որպեսզի առաջին հերթին մանկապարտեզներն ու դպրոցները ջեռուցման համակարգեր ունենան:
Համայնքապետարանների տրամադրած փաստաթղթերի ուսումնասիրությունը, հարցումներին տրված նրանց պատասխաններն էականորեն հակասում են իրար: Հատկապես Տաթև համայնքի ղեկավարի տեղակալի, Քաջարանի աշխատակազմի հայտնած այն միտքը, որ բոլոր բնակավայրերում հանրային լսումներ են իրականացնում և առաջարկություններն ու դիտողությունները հաշվի են առնում: Այն համայնքները, որոնք կազմակերպության գրավոր պահանջով տրամադրել են հանրային լսումների արձանագրությունները, դրանցում ոչինչ նշված չէ մասնակիցների կողմից արված առաջարկությունների կամ բարձրացրած հարցերի վերաբերյալ:
Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները՝ Գորիս, Կապան, Սիսիան, Քաջարան, իրենց հարցազրույցներում հայտնում են, որ լավատեղյակ են բոլոր բնակավայրերի խնդիրներին, հետևաբար տեղերում հանրային քննարկումներ իրականացնելու անհրաժեշտություն չկա: Բայցևայնպես, ո՞վ է ընտրում, թե գրանցված կարիքներից որն է առաջնահերթը տվյալ տարվա համար:
Այսպիսով, Սյունիքի մարզի բոլոր համայնքները բնակավայրերում հանրային լսումներ չկազմակերպելով, խախտում են այն օրենսդրական պարտադիր պահանջները, որոնք ամրագրված են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի ընդունած «Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրության» մեջ:
Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ 1. Մասնակից պետությունները, իրենց իրավազորության շրջանակներում, **ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինների գործերին յուրաքանչյուրի մասնակցության իրավունքը:**
Արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը ձեռնարկում են բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքը կյանքի կոչելու համար: 2. Մասնակցության իրավունքի իրականացման միջոցները ներառում են՝
լիազորել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ հնարավորություն ընձեռել, խրախուսել և նպաստել սույն Արձանագրության մեջ ամրագրված մասնակցության իրավունքի իրականացմանը,
ապահովել՝ մարդկանց ներգրավման ընթացակարգերի սահմանումը, որոնք կարող են ներառել խորհրդատվական գործընթացներ, տեղական հանրաքվեներ և խնդրագրեր, իսկ եթե տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության ներքո գտնվող տարածքում բնակչության թիվը մեծ է և (կամ) այն ընդգրկում է աշխարհագրական մեծ տարածք՝ մարդկանց այնպիսի մակարդակով ներգրավելուն ուղղված միջոցներ, որոնք ավելի մոտ են նրանց:
«**Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն**՝ Սույն օրենքի իմաստով՝ համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների

որոշումների վրա: Հետևաբար, եթե միայն համայնքի ղեկավարի տեսակետը բավարար լիներ սուբվենցիոն ծրագրեր կազմելու և ներկայացնելու համար, օրենսդրական այս պահանջները պարտադիր չէին համարվի:
Ընդգծենք, որ սուբվենցիոն ծրագրերի փաթեթը մինչ միջգերատեսչական հանձնաժողովին հասնելը մի քանի խողովակով է անցնում՝ ներկայացվում է Սյունիքի մարզպետարան, վերջինս փոխանցում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, որից հետո՝ հանձնաժողովին: Այս գերատեսչություններում լավատեղյակ են, որ հանրային լսումներ չեն իրականացվում, սակայն անտեսում են համայնքներում բնակչության մասնակցայնությանը կարևորություն չտալը:

Առաջարկություններ

1) Մշակել հանրային լսումների կազմակերպման նոր գործիքակազմ՝ հաշվի առնելով բազմաբնակավայր համայնքների առանձնահատկությունները (ներհամայնքային հեռավորություն, բնակավայրերի թիվ, բնակչության ժողովրդագրական տվյալներ՝տարիք և այլն)

2) Հանրային լսումներն արդյունավետության նպատակով **սահմանել սանդղակ**, որպեսզի տվյալ բնակավայրի բնակչության գոնե ներկայացուցչական մաս ապահովվի, և սահմանվի մասնակիցների հստակ թիվ՝ հանրային լսումը հաջողված համարելու համար:

3) Հանրային քննարկումներին ավելի շատ մարդ ներգրավելու, բնակիչների հետաքրքրությունը մեծացնելու համար ՏԻՄ-երը պետք է այլընտրանքային ձևեր գտնեն, հանրային լսումներ անցկացնել բնակավայրերում, նաև հանրային լսումների անցկացումը հնարավոր է կազմակերպել մրցութային հիմունքներով՝ այն պատվիրակելով քաղաքացիական հասարակության տեղական ներկայացուցիչներին:

4) Հանրային լսումների փոխարեն, եթե **ավագանու ինստիտուտի կայացման** ուղղությամբ քայլեր իրականացվեն, ավագանին կարող է քարտեզագրել բնակավայրերի խնդիրները. օրենքով նախատեսվում է ավագանիների համար մասնակի փոխհատուցում, սակայն մեծամասամբ, տեղական բյուջեն ազատ միջոցներ չի գտնում՝ գոնե ճանապարհածախս փոխհատուցելու համար.

5) Ավագանիները բավարար չափով իրազեկված չեն հրապարակայնության, թափանցիկության ապահովման կարևորության մասին՝ հմտությունների պակասի պատճառով, անհրաժեշտ է պարբերաբար ավագանիների **վերապատրաստումներ կազմակերպել**, նաև որոշակի մասնագիտական պահանջներ ներկայացնել ավագանու թեկնածությունների առաջադրման ժամանակ:

6) **Վերանայել** սուբվենցիաների տրամադրման պահանջները. «Պետությունը պայմանավորված ծրագրային ոլորտով՝ սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար համայնքի ներդրման ոլորտային միավորներ է սահմանում, որի պատճառով սուբվենցիոն ծրագրերում մեծ թիվ են կազմում նախակրթարանների վերանորոգմանն ուղղված ծրագրերը:

7) Համայնքի ներդրման անհնարինության պատճառով սուբվենցիոն ծրագրեր չեն ներկայացվում կամ դրանք պակաս առաջնահերթ են բնակիչների համար. պետությունը պետք է **այլընտրանքային մոտեցում ցուցաբերի** փոքր բյուջե ունեցող համայնքների համար, որոնք չեն կարողանում ներդրում ապահովել:

8) Սուբվենցիոն ծրագրեր ներկայացնել միայն այնպիսի խնդիրների լուծման համար, որոնք նշված են համայնքի զարգացման ծրագրերում. այդ դեպքում **հանրային լսումներ կարող են իրականացվել** հինգ տարին մեկ անգամ, երբ մշակվում է զարգացման հնգամյա ծրագիրը:

9) Սուբվենցիոն ծրագրերի ներկայացման, հաստատման գործընթացում **չեղարկել** մարզպետարանների ներգրավումը: